Վրաստան
Խորհրդարանական ընտրություններ
1 հոկտեմբերի, 2012 թ.

«Համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստան»-ի ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը

Հաշվետվությունը հրատարակված է «Բաց կազմակերպություն՝ Վրաստանին» («Աջակցություն ազատ և արդարացի խորհրդարանական ընտրությունների անցկացմանը Սամցխե Ջավախեթիում, Քվեմո Քարթլիում, Կախեթիում, Շիդա Քարթլիում և Մցխեթա-Մթիանեթիում՝ «Բազմազգ Վրաստանի» դիտորդական գործունեությունը բարելավելու ճանապարհով» նախագծի) և Վրաստանում Բրիտանիայի դեսպանության («Աջակցություն Ազատ և արդարացի խորհրդարանական ընտրությունների անցկացմանը՝ էթնիկական փոքրանասնություններով կոմպակտ բնակեցված տարածաշրջաններում՝ «Բազմազգ Վրաստանին» դիտորդական գործունեությունը բարելավելու ճանապարհով» նախագծի) ֆինանսական աջակցությամբ:

Հրատարակության բովանդակությանը պատասխանատու է Միասնական - քաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանը» և նա չի արտացոլում «Բաց կազմակերպություն՝ Վրաստանին» և Վրաստանում Բրիտանիայի դեսպանության հայացքները:»:

Թբիլիսի, Վրաստան
1 նոյեմբերի, 2012 թ.

Ցանկ

1. Ռեզյումե 3
2. Մեթոդոլոգիա 7
3. Ազգային փոքրամասնությունների
ընդգրկվածությունը 9
4. Ընտրական վարչակազմ 11
5. Ընտրողների գրանցում 14
6. Թեկնածուների գրանցում 15
7. Նախընտրական քարոզարշավ 17
8. Մեդիա 22
9. Տեղական և միջազգային դիտորդներ 22
10. Ձայն տալ, հաշվել և տաբուլացիա 24
11. Ընտրությունների օրը արված բողոքներ և
բողոքարկումներ 27
12. Երաշխավորություններ 29
13. Ընտրությունների արդյունքները 33
14. PMMG-ի մասին 35

1. Ռեզյումե

Համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստան»-ը (PMMG) 2012 թվականի հոկտեմբերի 1-ի համար իրականացրեց ընտրական մոնիտորինգի երկու ծրագիր. ա) Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի որոշված շրջաններում պետական ռեսուրսների չարաշահման երկարաժամկետ մոնիտորինգ, ինչպես նաև ընտրական քարոզարշավի ֆինանսավորման մոնիտորինգ: Ծրագիրն իրականացվեց տեղում գործուղված չորս երկարաժամկետ դիտորդների կողմից, բ) ընտրությունների օրվա դիտորդական առաքելությունՍամցխե-Ջավախեթի, Քվեմո-Քարթլիի, Կախեթի,Շիդա Քարթլիի և Մցխեթա-Մթիանեթի շրջաններում, ինչպես նաև տվյալ տարածաշրջաններում ընտրություններից հետո արված բողոքների և բողոքարկումների մոնիտորինգ: Ծրագրի թիրախային տարածաշրջաններն էին Սամցխե-Ջավախեթին, Քվեմո Քարթլին, Կախեթին, Շիդա Քարթլին և Մցխեթա-Մթիանեթին, որի տարածքի 90%-ի վրա բնակվող ազգային փոքրամասնությունները կազմում են ամբողջ բնակչության 30%-ից ավելին: Ծրագիրն իրականացվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի երկու դիտորդի, տարածքային ընտրական հանձնաժողովի 17 դիտորդի, ընտրական տեղամասերի 340 դիտորդների և շարժուն խմբերի 69 դիտորդների կողմից: Ընդամենը 428 դիտորդ:

Չնայած, ընտրությունների օրը, նախապատրաստական, ձայն տալու և ձայների հաշվան գործընթացում խախտումներ հայտնաբերելուն և դրանց վրա կարճաժամկետային դիտորդների արձագանքին, այնուամենայնիվ PMMG-ն եզրակացնում է, որ ընտրությունները համապատասխանում էին թափանցիկության և արդարացիության սահմանված նորմերին, ինչն էլ հնարավորություն տվեց երկրի ազգային փոքրամասնություններին որպես ընտրողներ կատարելու սեփական քաղաքական ընտությունը մրցակցային միջավայրում:

Վրաստանի խորհրդարանն ընտրվում է խառը համակարգով, 4-ամյա ժամկետով: Խորհրդարանի 77 անդամի ընտրությունը կատարվում է համամասնական համակարգով երկրի մասշտաբով, իսկ մնացած 73 անդամս ընտրվում է 73 միամանդատային (մեծամասնական) ընտրական տարածքներից: Վրաստանի ընտրական օրենսդրությունը չի պահանջում, որ միամանդատային մեծամասնական տարածքները լինեն հավասար կամ միմյանց համապատասխան չափի: Ընտրությունների վարչարարությունն իրականացվեց եռաստիճանային ընտրական վարչակազմի կողմից. Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ), 73 Տարածքային ընտրական հանձնաժողով և 3500-ից ավելի տեղամասային ընտրական հանձնաժողով:

ԿԸՀ-ից ստացված տեղեկատվության համաձայն, 62115 տեղական և 1641 միջազգային դիտորդական կազմակերպություն, 33000-ից ավելի ընտրական սուբյեկտի ներկայացուցիչ և 3295 լրատվամիջոցի ներկայացուցիչ հետևում էր ձայն տալու գործընթացին: 47 հազարից ավելի հանձնաժողովի անդամ սպասարկում էր ընտրողներին: ԿԸՀ-ում մատչելի էր

24-ժամյա թեժ գիծը, էլեկտրոնային (օնլայն) զրույցների և օպերատորի ծառայությունը: ԿԸՀ-ում, նմանապես, առավոտյան ժամը 9-ից սկսած, ամեն երկու ժամը մեկ, անց էին կացվում բրիֆինգներ: ԿԸՀ-ն կանոնավորապես բնակչությանը տեղեկատվություն էր հաղորդում ընտրողների ընտրական տեղամասեր ներկայանալու և ձայն տալու գործընթացի մասին:

Գրանցված քաղաքական կուսակցությունների և ընտրական դաշինքների մեծամասնությունը, ԿԸՀ-ի կողմից մատուցված տեղեկատվության համաձայն, ներկայացրեց թեկնածուներ ազգային փոքրամասնությունների շարքերից: Գրանցված յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն և ընտրական դաշինք, համամասնական կուսակցական ցուցակներում և մեծամասնական թեկնածուների ցուցակներում ուներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Թերևս, ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ ամենամեծ թվաքանակով համարակալած ուներ «Միասնական ազգային շարժում – առավել օգուտ ժողովրդին» կուսակցությունը (13), «Վրաստանի աշխատավորների խորհուրդը» (12), «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինքը (12) և «Կախա Կուկավա – Ազատ Վրաստան» քաղաքական միավորումը (9):

Խորհրդարանական ընտրությունների արդյունքում, համամասնական ցուցակով ազգային փոքրամասնությունների շարքերից ընտրվեց խորհրդարանի 3 անդամ («Բիձինա Իվանիշվիլի–վրացական երազանք»՝ ընտրական դաշինք), իսկ մեծամասնական ցուցակով՝ ազգային փոքրամասնության 3 անդամ («Միասնական ազգայի շարժում – առավել օգուտ ժողովրդին»): Համապատասխանաբար, ընդհանուր առմամբ խորհրդարանի անդամ դարձավ ազգային փոքրամասնության 6 ներկայացուցիչ:

Նախորդ տարիների համեմատությամբ, ընտրական վարչակազմը նշանակալից ուշադրություն հատկացրեց ազգային փոքրամասնությունների հարցին: ԿԸՀ-ն ստեղծեց հատուկ աշխատանքային խումբ ազգային փոքրամասնությունների ընտրողների ընտրական գործընթացների պարզեցման և մատչելիության նպատակով: Խմբի շրջանակներում ԿԸՀ-ն իրականացրեց ընտրողների տարբեր տեսակի լուսավորության ծրագիր փոքրամասնությունների համար: Բացի դրանից, ԿԸՀ-ն թարգմանեց փոքրամասնությունների լեզուներով հետևյալ ընտրական փաստաթղթերը. ա) ընտրական տեղամասի հանձնաժողովի անդամների ձեռնարկ (վրացերեն-հայերեն-ռուսերեն և վրացերեն-ադրբեջաներեն-ռուսերեն), բ) ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահի հրահանգները (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն), գ) ընտրական տեղամասի հանձնաժողովի անդամների հրահանգները (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն), դ) ընտրողների տեղեկատվական թերթիկներ (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն) ե) ազգային փոքրամասնության ընտրողների տվյալները միասնական ընտրական ցուցակների համաձայն: ԿԸՀ-ն անցկացրեց վարժանքների երեք սերիա ազգային փոքրամասնություններից ընտրական վարչակազմի անդամների համար: Վարժանքի ծրագիրն անցկացվեց ընտրովի՝ ռուսերեն,

ադրբեջաներեն և հայերեն լեզուներով:

ԿԸՀ-ն իր համացանցային էջում ստեղծել է «Ազգային փոքրամասնություններ» հատուկ բաներ, որտեղ լրատվությունը տրված է հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: ԿԸՀ-ն նույնպես առաջարկեց փոքրամասնություններին լայնորեն լինեն ներկայացված ընտրական վարչակազմերում: ԿԸՀ-ից ստացված տեղեկատվությունների համաձայն, ընտրական տեղամասերի հանձնաժողովների անդամների թվաքանակը, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին, կազմեց 2774 մարդ. ընտրական տեղամասերի հանձնաժողովների ծագումով ադրբեջանցի 1241 և հայ 1533 անդամ էր:

Մի քանի քաղաքական կուսակցություն և ընտրական դաշինք, այդ թվում «Միասնական ազգային շարժումը», «Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական դաշինքը, «Գիորգի Թարգամաձե – քրիստոնեա-ժողովրդավարական միավորում» ընտրական դաշինքը և «Նոր աջեր» քաղաքական միավորումը ընդգրկված էին փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում տեղական ընտրողներին գլխավոր առաքումները փոխանցելու նպատակով: Թերևս, ընտրական քարոզարշավով, ամենաակտիվ կուսակցությունը«Միասնական ազգային շարժումս» էր, որին հետևում էին «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինքը և «Գիորգի Թարգամաձե – քրիստոնեա-ժողովրդավարական միավորում» ընտրական դաշինքը: Պետք է նշել, որ բոլոր հիշատակված քաղաքական կուսակցությունները բացած ունեն գրասենյակներ ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված շրջանների մեծամասնությունում: Ինչ վերաբերում է մնացած քաղաքական կուսակցություններին և ընտրական դաշինքներին, նրանք չապահովեցին արդյունավետ ընդրգրկվածություն փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ֆինանսական ռեսուրսներ չունենալու, ինչպես նաև տեղական իշխանության կողմից ստեղծված պատնեշների պատճառներով: Թերևս, մի քանի ընդդիմադիր կուսակցության որոշ ներկայացուցիչներ նախընտրական քարոզարշավի ժամանակ այցելեցին փոքրամասնություններով տարածաշրջաններ:

Եթե բոլոր քաղաքական կուսակցությունները և ընտրական դաշինքները ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական ցուցակներում մտցրած ունեին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, ապա դրանցից միայն մի քանիսը ի նկատի ունեցավ ազգային փոքրամասնությունների կարիքները և խնդիրները և համապատասխանաբար մտցրեց իր քաղաքական ծրագրերում: Միայն «Միասնական ազգային շարժումը», «Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական դաշինքը և «Գիորգի Թարգամաձե –քրիստոնեա-ժողովրդավարական միավորում» ընտրական դաշինքը և «Նոր աջեր»« քաղաքական միավորումը շոշափեցին ազգային փոքրամասնությունների իրավունքների և շահերի պաշտպանության և աջակցության հարցերն իրենց քաղաքական հարթակներում: Սակայն չնայած նման առաջընթացին, ազգային փոքրամասնությունների իսկական հիմնախնդիրների լուսաբանման ինտենսիվությունը և մասշտաբը այնուամենայնիվ բավարարչէր: Համարյա բոլոր ծրագրերը

պարունակում էին ընդհանուր հայտարարություններ փոքրամասնությունների շահերին աջակցելու մասին, թերևս, առանց նրանց կարիքների և հիմնախնդիրների արդյունավետ լուծման ուղիների լուսավոր և կոնկրետ առաջարկություններ ներկայացնելու:

Ընդհանուր առմամբ, քարոզարշավը Քվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախեթում ընթացավ բավականին քաղաքականացված միջավայրում: Քարոզարշավի հիմնական ձև էին ներկայացնում համեմատաբար փոքր մասշտաբի միջոցառումները և հավաքները, լայնամասշտաբ ցույցերի փոխարեն: Միայն «Միասնական ազգային շարժումը» և «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինքը անցկացրեցին լայնամասշտաբ ակցիաներ հատկապես այնպիսի մեծ տարածաշրջանային կենտրոններում, ինչպիսիք են Ռուսթավին և Ախալցիխեն: Քարոզարշավի գովազդային բիլբորդները, որոնք մեծավ մասամբ պատկանում էին «Միասնական ազգային շարժմանը», խոյացել էին Թբիլիսիի և տարածաշրջանների մի քանի մեծ քաղաքներում: Ընդդիմադիր կուսակցությունների մեծամասնությունը հայտարարում էր, որ իրենք չեն ունեցել կոմերցիոն բիլբորդներին հասնելու հավասար ունակություն և հաստատում էին, որ գովազդային աֆիշների տեղադրման տեղերը նախապես զբաղեցվել էին «Միասնական ազգային շարժման» կողմից և որ սահմանվել էին բիլբորդների վրա քաղաքական գովազդի տեղադրման բավականին բարձր գներ:

Ընտրական քարոզարշավին հետևում էր բավականին հաճախակի մեղադրանքներ սպառնալիքների մասին, այդ թվում թեկնածուների, կուսակցությունների ակտիվիստների, պետական գործիչների, ուսանողների և շարքային մարդկանց կողմից: PMMG-ի կողմից ուսումնասիրված բազմաթիվ կոնկրետ մեղադրանքների շրջանում, մի քանիսը հայտնվեց հավաստի: Դրանց թվում էր տեղական իշխանության կողմից քարոզարշավի գործընթացին մասնակցությունը դադարեցնելու նպատակով ընդդիմությանը աջակցողների վրա ճնշման մի քանի հաստատված դեպք: Այս տեսակի ճնշումը գլխավորապես իրականացվում էր ուսուցիչների, բժիշկների և ուսանողների վրա: Եղել են նաև դպրոցի ղեկավարության և «Միասնական ազգային շարժման» պաշտոնական ներկայացուցիչների կողմից ուսուցչի նկատմամբ սպառնանքի մի քանի հաստատված դեպք, որի ժամանակ էլ նրանց սպառնացել են աշխատանքից հեռացնել, եթե կշարունակեն ընդդիմադիր կուսակցությունների հետ աշխատել:

Հայտնի դարձավ Մառնեուլիի մունիցիպալիտետում տեղական իշխանության բարձր կարգի ներկայացուցչի կողմից PMMG-ի երկարաժամկետ դիտորդի վրա ճնշում գործադրելու փորձի մասին, վարչական ռեսուրսների չարաշահման փաստի մասին լրացուցիչ տեղեկատվություն որոնելու ժամանակ:

Պետության և կուսակցության միջև տարբերության սահմանը հաճախ կորչում էր Սամցխե-Ջավախեթի և Քվեմո-Քարթլիի տարածաշրջաններում: Լրատվություն ստացվեց մի քանի դեպքերի մասին, որոնց համաձայն տեղական կառավարման սոցիալական ծրագրերը երբեմն համակցված էին « Միասնական ազգային շարժման» ընտրական քարոզարշավի

միջոցառումների հետ: Բացի դրանից, հաճախ էին պետական աստիճանավորների աշխատանքային պարտականությունները կատարելիս «Միասնական ազգային շարժման» մեծամասնական թեկնածուների ընտրական քարոզարշավերին մասնակցության դեպքերը:

Կարճաժամկետ դիտորդների կողմից ձեռքբերված փաստերի համաձայն, PMMG-ն եզրակացնում է, որ կարճաժամկետ դիտորդները հիմնականում իրականացրին մոնիտորինգ ընտրական տեղամասի աշխատանքի ցանկացած փուլում առանց սահմանափակումների, այդ թվում նախապատրաստական, ձայն տալու և ձայները հաշվելու գործընթացում: Հայտնի դարձավ մեկ դեպքի մասին, որի համաձայն կարճաժամկետ դիտորդին արվեց նախազգուշացում ընտրական տեղամասի նախագահի կողմից: Եղավ նաև դեպք, երբ կարճաժամկետ դիտորդին չեն թույլատրել մտնել ընտրական տեղամաս (թիվ 53 ընտրական տեղամաս Գարդաբանի թիվ 21-ում), որպեսզի իրականացնի ստանձնած պարտականությունը: Թերևս, ուշացումով նրան իրավունք տրվեց ընտրական տեղամասում իրականացնելու դիտարկում:

Քվեարկության օրը հիմնականում խաղաղ էր՝ և ընտրական տեղամասերի աշխատանքը, նախապատրաստական, ձայն տալու և ձայները հաշվելու գործընթացները ներառյալ, անցկացվեցին առանց սահմանափակումների: Թերևս, ամրագրվեց ընթացակարգերի խախտման մի քանի դեպք, հատկապես ընտրական տեղամասերի և ձայն տալու տեղը բացելու ժամանակ: Ընդհանուր առմամբ, PMMG-ի դիտորդները. ա)արեցին 77 բանավոր դիտողություն և լրացրեցին միջադեպերի նույնքան ձև, բ) կազմեցին և համապատասխան ընտրական տեղամասերին ներկայացրին 48 հայց, կազմեցին և տարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացրին 9 հայց: Բացի դրանից, PMMG-ի փաստաբանները կազմել և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին են ներկայացրել 2 հայց, նաև 4 հայց՝ դատարանին: Պետք է նշել, որ դիտորդները, ինչպես նաև փաստաբանները բողոքներ և հայցեր են կազմել ընտրական խախտումներից հետո հիմնական դեմքերին արձագանքելու նպատակով, ա)ձայն տալու գործընթացի վրա ազդեցություն գործելու փորձ, բ) դրոշմանշման արարողակարգի խախտում, գ) մի քանի ընտրական խախտում, որոնք խոչընդոտեցին նախապատրաստական և ձայն տալու գործընթացները, դ) ընտրական տեղամասերում ընտրական քվեաթերթերի անբավարարությունը սիստեմատիկ խախտում էր ներկայացնում, ե)մեկից ավելի ընտրողի մուտքը քվեախուց ընդունել էր սիստեմատիկ բնույթ:

2. Մեթոդոլոգիա

Սույն զեկույցը ամբողջությամբ հենվում է PMMG-ի կողմից ընտրությունների մոնիտորինգի 2 ծրագրերի իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության վրա.

A) պետական ռեսուրսներ, ինչպիսիք են ֆինանսական միջոցները, ինստիտուցիոն ռեսուրսներ, կարգավորման և գործադրման մեխանիզմներ, չարաշահման, ինչպես նաև ընտրական քարոզարշավների ֆինանսավորման երկարաժամկետ մոնիտորինգ (մայիս-սեպտեմբեր): Ծրագիրն իրականացվեց Սամցխե-Ջավախեթում, մասնավորապես, Նինոծմինդայի, Ախալքալաքի և Ծալկայի շրջաններում, և նաև Քվեմո Քարթլիում, մասնավորապես Մառնեուլի, Բոլնիսի և Դմանիսի շրջաններում: Ծրագիրն իրականացրել են տեղում տեղավորված չորս երկարաժամկետ դիտորդները. 2 դիտորդ յուրաքանչյուր տարածաշրջանում:

B) Քվեարկության օրվա դիտորդական առաքելությունը Սամցխե-Ջավախեթում, Քվեմո Քարթլիում, Կախեթում, Շիդա Քարթլիում և Մցխեթա-Մթիանեթում, ինչպես նաև ընտրություններից հետո բողոքների և հայցերի մոնիտորինգ վերոհիշյալ տարածաշրջաններում: Ծրագրի թիրախային տարածաշրջաններն էին Սամցխե-Ջավախեթին, Քվեմո Քարթլին, Կախեթին, Շիդա Քարթլին և Մցխեթա-Մթիանեթին, որի տարածքի 90%-ի վրա բնակվող ազգային փոքրամասնությունները կազմում են ամբողջ բնակչության 30%-ից ավելին: Ծրագիրն իրականացվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2, տարածքային ընտրական հանձնաժողովի 17, ընտրական տեղամասերի 340 և շարժուն խմբի 69, ընդհանուր առմամբ 428 դիտորդների կողմից:

PMMG-ը գնահատեց ընտրությունների գործընթացի համապատասխանությունը ԵԱՀԿ-ի «Անդամ պետությունների համար սահմանված ժողովրդավարական ընտրությունների պարտականություններին», «Ընտրական նյութերում լավ պրակտիկայի օրենդրությանը» (Վենետիկի հանձնաժողով), «Կոպենհագենի փաստաթղթին», ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային չափանիշներին և Վրաստանի օրենսդրությանը:

PMMG-ն շնորհակալություն է հայտնում «Բաց հասարակություն – Վրաստան»-ին ծրագիր A-ի իրականացմանը ֆինանսական աջակցության, ինչպես նաև ազգային ժողովրդավարական ինստիտուտին (NDI), «Բաց հասարակություն – Վրաստան» հիմադրամին և Վրաստանում Միավորված թագավորության դեսպանությանը ծրագիր B-ի իրականացմանը ֆինանսական օգնություն ցուցաբերելու համար: PMMG-ն երախտագիտություն է հայտնում նաև իր գործընկեր կազմակերպություններին՝ «Միջազգային թափանցիկություն», «Միջազգային հասարակայնությունը ժողովրդավարության և արդարացի ընտրությունների համար», Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային, տարածաշրջանային գործընկերներին և արտասահմանյան առաքելություններին՝ մոնիտորինգի ողջ ժամանակաշրջանի ընթացքում համագործակցության համար:

3. Ազգային փոքրամասնությունների ընդգրկվածությունը

Ազգային փոքրամասնությունները կազմում են Վրաստանի ողջ բնակչության16.2%-ը: Էթնիկ ադրբեջանցիները (6.5%) և էթնիկ հայերը (5.7%) ներկայացնում են փոքրամասնությունների ամենամեծ խումբը, ովքեր հոծ բնակվում են Քվեմո Քարթլիի և, համապատասխանաբար, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջաններում: Կան նույնպես փոքրամասնությունների մի քանի այլ խմբեր, ինչպիսիք են ռուսները, օսերը, քիստերը, հրեաները, աբխազները և քրդերը:

Երկրի ներքին օրենսդրության, այդ թվում Սահմանադրության համաձայն, ազգային փոքրամասնություններին շնորհված է իրավունք մասնակցելու քաղաքական գործընթացներին և լինելու ընտրվածներ: Վրաստանը միացել է մարդու իրավունքների կոնվենցիաների մեծամասնությանը, այդ թվում «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային Կոնենցիային», որը ստեղծում է նրանց իրավունքների պաշտպանության և իրականացման իրավական շրջանակը: Չնայած փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում որոշակի առաջընթացին, երկիրը չունի ինկլուզիոն իրավական շրջանակ նրանց իրավունքների լրիվ պաշտպանության և իրականացման նպատակով: Վրաստանը դեռևս չի ընդունել կոնկրետ կարգավորիչ մեխանիզմ, որը կնպաստեր քաղաքական գործունեությունում փոքրամասնությունների որակապես և քանակապես բարձր մակարդակի քաղաքական ընդգրկվածությանը և ներկայացուցչությանը:

Գրանցված քաղաքական կուսակցությունների և ընտրական դաշինքների մեծամասնությունը որպես թեկնածուներ անվանեց անձանց, ովքեր պատկանում են ազգային փոքրամասնություններին: ԿԸՀ-ից ստացված տվյալների համաձայն, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պտտվում են հետևյալ կուսակցությունների և դաշինքների մեծամասնական պատգավորների կուսակցական ցուցակում.

1. «Կախա Կուկավա – ազատ Վրաստան» քաղաքական միավորումը համամասնական ցուցակում ուներ հինգ թեկնածու (15-րդ, 16-րդ, 59-րդ, 60-րդ և 120-րդ համարներ), 4 մեծամասնական թեկնածու (Մառնեուլի, Ախալքալաքի, Նինոծմինդայի և Սենակի ընտրական տարածքներում):

2. «Ազգային-ժողովրդավարական կուսակցությունը». 6 թեկնածու համամասնական ցուցակում (8-րդ, 34-րդ, 91-րդ, 108-րդ, 123-րդ և 141-րդ համարներ), ոչ մի մեծամասնական թեկնածու:

3. «Միասնական ազգային շարժում – ավելի օգուտ ժողովրդին». 10 թեկնածու համամասնական ցուցակում (39-րդ, 41-րդ, 50-րդ, 84-րդ, 87-րդ, 94-րդ, 102-րդ, 113-րդ, 114-րդ և 126-րդ համարներ), 3 մեծամասնական թեկնածու (Մառնեուլի, Ախալքալաքի և Նինոծմինդայի ընտրական տարածքներում):

4. «Հանուն արդարացի Վրաստանի». 5 թեկնածու համամասնական ցուցակում (2-րդ, 8-րդ, 71-րդ, 76-րդ և 114-րդ համարներ), ոչ մի մեծամասնական թեկնածու:

5. «Ժողովրդական շարժում». 5 թեկնածուով համամասնական ցուցակում (26-րդ, 66-րդ, 68-րդ, 94-րդ և 104-րդ համարներ), ոչ մի մեծամասնական թեկնածու:

6. »Ազատություն – Զվիադ Գամսախուրդիայի ճանապարհ». 1 թեկնածու համամասնական ցուցակում (87-րդ համար), ոչ մի մեծամասնական թեկնածու:

7. «Ջոնդի Բաղաթուրիա – վրացական դասի» քաղաքական միավորում. 1 թեկնածու համամասնական ցուցակում (86-րդ համար), ոչ մի մեծամասնական թեկնածու:

8. «Նոր աջեր« քաղաքական միավորում. Political Union “New Rights”: 3 թեկնածու համամասնական ցուցակում (16-րդ, 17-րդ և 104-րդ համարներ), 3 մեծամասնական թեկնածու (Մառնեուլի, Ախալքալաքի և Նինոծմինդայի ընտրական տարածքներում):

9. «Ժողովրդական կուսակցություն». 1 թեկնածու համամասնական ցուցակում (68-րդ համար), ոչ մի մեծամասնական թեկնածու:

10. «Մերաբ Կոստավայի ընկերություն». 2 թեկնածու համամասնական ցուցակում (31-րդ և 40-րդ համարներ), ոչ մի մեծամասնական թեկնածու:

11. «Ապագա Վրաստան». 7 թեկնածու համամասնական ցուցակում (20-րդ, 80-րդ, 86-րդ, 99-րդ, 102-րդ , 405-րդ և 118-րդ համարներ), ոչ մի մեծամասնական թեկնածու:

12. «Վրաստանի աշխատավորական խորհուրդ». 11 թեկնածու համամասնական ցուցակում (3-րդ, 62-րդ, 77-րդ, 78-րդ, 82-րդ, 83-րդ, 88-րդ, 90-րդ, 95-րդ, 99-րդ և 118-րդ համարներ), 1 մեծամասնական թեկնածու (Ախալքալաքի ընտրական տարածք):

13. «Շալվա Նաթելաշվիլի – Վրաստանի լեյբորիստական կուսակցություն». 4 թեկնածու համամասնական ցուցակում (32-րդ, 33-րդ, 79-րդ և 98-րդ համարներ). 2 մեծամասնական թեկնածու (Գարդաբանի և Մառնեուլի ընտրական տարածքներում):

14. »Վրաստանի սպորտսմենների միություն». 8 թեկնածու համամասնական ցուցակում (28-րդ, 29-րդ, 31-րդ, 41-րդ, 62-րդ, 97-րդ և 109 նոյեմբեր), ոչ մի մեծամասնական թեկնածու:

15. «Գիորգի Թարգամաձե - քրիստոնեա-ժողովրդավարական միավորում» ընտրական դաշինք. 2 թեկնածու համամասնական ցուցակում (14-րդ և 15-րդ համարներ), 2 մեծամասնական թեկնածու (Մառնեուլի և Լենտեխի ընտրական տարածքներում):

16. «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինք. 7 թեկնածու համամասնական ցուցակում (36-րդ, 38-րդ, 56-րդ, 87-րդ, 155-րդ, 157-րդ և 170-րդ համարներ). 5 մեծամասնական թեկնածու (Մառնեուլի, Ծալկայի, Քարելի, Ախալքալաքի և Նինոծմինդայի ընտրական տարածքներում):

Ինչպես երևում է, յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն և ընտրական դաշինք իր համամասնական և մեծամասնական ցուցակում մտցրած ուներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Թերևս, ազգային փոքրամասնություններից բոլորից շատ ներկայացուցիչ անվանել էր «Միասնական ազգային շարժում՝ ավելի օգուտ ժողովրդին» (13 թեկնածու) կուսակցությունը, դրան հետևում էր «Վրաստանի աշխատավորների խորհուրդը» (12), «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինքը (12) և «Կախա Կուկավա – ազատ Վրաստան» քաղաքական միավորումը (9):

4. Ընտրական վարչակազմ

Փոքրամասնությունից ընտրողների կարիքների հետ կապված միջոցառումների ընդհանուր տեսություն

2012 թվականի մայիսին ազգային փոքրամասնությունների ընտրողների ընտրական գործընթացի պարզեցման և աջակցության նպատակով, ԿԸՆ-ն ձևավորեց աշխատանքային խումբ: Խմբում ընդգրկված են ամբողջ շարք պետական մարմիններ, քաղաքացիական հասարակական, միջազգային, դոնոր և լրատվական կազմակերպություններ, ինչպես նաև փոքրամասնությունների հարցերով աշխատող քաղաքացիական հասարակական կազմակերպություններ՝ ընդհանուր առմամբ 19 կազմակերպություն:

Աշխատանքային խումբը կազմեց 2012 թվականի գործնական պլանը, որով սահմանվեցին հետևյալ խնդիրները. ա)ազգային փոքրամասնություններին հավասար ընտրական իրավունքի ապահովում, բ) երիտասարդ ընտրողների իրազեկվածություն և ընտրական գործընթացներին ընդգրկվածություն, գ)կին ընտրողների իրազեկվածություն և ընտրական գործընթացներին ընդգրկվածություն, դ)սահմանափակ կարողություններով ազգային փոքրամասնությունների ընտրողների ընտրական գործընթացներին ընդգրկվածություն և աջակցություն, ե)լրատվական կազմակերպությունների հետ հանդիպումների կազմակերպում, զ)տեղեկատվության մատակարարում Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդին, է)փոքրամասնությունների լեզուներով ընտրական փաստաթղթերի թարգմանություն:

Այս նպատակով, աշխատանքային խումբը ձեռնամուխ եղավ հետևյալ միջոցառումների իրականացմանը, ա)վարժանքների և սեմինարների կազմակերպում երիտասարդների, կանանց և սահմանափակ կարողությունների անձանց համար ընտրական կանոնների և ընթացակարգերի մասին, բ) քվեարկության օրվա բեմականացում, գ)տեղական բնակչության իրազեկում երիտասարդության և կին լիդերների մասնակցությամբ ընտրական բուկլետների և տեղեկատվական թերթերի տարածման ճանապարհով, դ) ավարտական դասարանների աշակերտներին ընտրական համակարգի ուսուցում, ե) երիտասարդների այցերի կազմակերպում Կենտրոնական ընտրական հանձնաժողով, զ)ընտրությունների թեմայով

գովազդային հոլովակների տարածում, համր թարգմանության ուղեկցությամբ, է)կրթական նյութերի տարածում, ը) տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար հատուկ ձեռնարկների կազմում քվեարկության օրը սահմանափակ կարողությունների անձանցհետվերաբերմունքիկանոնների մասին, թ)ընտրական տեղամասերի հարմարեցումը հիշյալ անպաշտպան խմբերի կարիքներին: Ամառվա ընթացքում աշխատանքային խումբն անցկացրեց 5 աշխատանքային հանդիպում Թբիլիսիում, ինչպես նաև իրականացրեց այցեր հետևյալ տարածաշրջաններ. Քվեմո Քարթլի-Մառնեուլի, Սամցխե-Ջավախեթի-Ախալքալաքի և Կախեթի – Թելավի, Ղարաջալա գյուղ:

Ընտրական վարչակազմի անդամների և ազգային փոքրամասնությունների ընտրողների իրազեկվածություն.

ԿԸՀ-ն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար թարգմանեց ընտրությունների հետ կապված հետևյալ փաստաթղթերը. ա)ընտրական տեղամասի հանձնաժողովի անդամների ձեռնարկ (վրացերեն-հայերեն-ռուսերեն և վրացերեն-ադրբեջաներեն-ռուսերեն), բ)ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահի հրահանգներ (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն), գ) ընտրական տեղամասի հանձնաժողովի անդամների հրահանգներ (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն), դ) ընտրողների տեղեկատվական թերթեր (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն), ե)ազգային փոքրամասնությունների ընտրողների տվյալներ միասնական ընտրացուցակների համաձայն:

ԿԸՆ-ն անցկացրեց վարժանքների երեք սերիա ազգային փոքրամասնություններից ընտրական վարչության անդամների համար: Վարժանքի ծրագիրն անցկացվեց ընտրովի՝ ռուսերեն ադրբեջաներեն և հայերեն լեզուներով

ԿԸՀ-ի պատվերով օգոստոսի 15-ից Վրաստանի հանրային հաղորդիչը թարգմանում և եթերում տեղադրում էր 6 րոպեանոց «Ընտրական հեռուստատեսային դայջեստ» հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Բացի դրանից, հանրային հաղորդիչի եթերում հաղորդվում էր «Ազգային Մոամբե», «Ընտրական հեռուստատեսային դայջեստ» և ԿԸՀ-ի գովազդային հոլովակներ հետևյալ հերթականությամբ. 07:00 ժամ՝ Վրաստանի հանրային հաղորդիչի առաջին ալիքի եթերում, հայերեն և ադրբեջաներեն, 07:00 ժամ՝ Վրաստանի հանրային հաղորդիչի 3-րդ ալիքի եթերում (ПИК) – հայերեն, 24:00 ժամ – Վրաստանի հանրային հաղորդիչի 2-րդ ալիքի եթերում, հայերեն և ադրբեջաներեն, 22:00 ժամ – Մառնեուլի «Մառնեուլ TV“ հեռուստաընկերության եթերում՝ ադրբեջաներեն, 23:00 ժամ՝ Բոլնիսի «Բոլնելի» հեռուստաընկերության եթերում՝ ադրբեջաներեն, 07:00 ժամ՝ Ախալցիխեի «9-րդ ալիք» հեռուստաընկերության եթերում՝ ադրբեջաներեն, 07:00 ժամ՝ Ախալխալաքի «ԱՏՎ 12» հեռուստաընկերության եթերում՝ հայերեն, 07:00 ժամ՝ Նինոծմինդայի «Փարվանա» հեռուստաընկերության եթերում՝ հայերեն, 07:00 ժամ՝ Վրաստանի հանրային հաղորդիչի Առաջին ռադիոյի եթերում՝ հայերեն և ադրբեջաներեն:

Հանրային հաղորդիչը անցկացրեց 2 հեռուստատեսային բանավեճ քաղաքական սուբյեկտների միջև, որոնք այնուհետև թարգմանվեցին հայերեն և ադրբեջաներեն և տեղադրվեցին տարածաշրջանային հեռուստատեսություններում:

ԿԸՀ-ի կայք-էջում տեղադրվեց «Ազգային փոքրամասնություններ» բաները, որտեղ ազգային փոքրամասնությունների ընտրողների համար հայերեն և ադրբեջաներեն մատչելի է հետևյալ տեղեկատվությունը. տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ձեռնարկային հրահանգ, ընտրողների հուշափլեյեր, գովազդային հոլովակներ և ազգային փոքրամասնությունների աշխատանքային խմբի գործունեության մասին տեղեկատվություն: Քվեարկության օրվա համար ԿԸՀ-ում ստեղծվեց հատուկ թեժ գիծ ընտրությունների հարցերի կապակցությամբ ընտրողներին օգտավետ տեղեկատվությունը ժամանակին հաղորդելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում, տեղեատվություն ստանալ հնարավոր էր ինչպես վրացերեն, այնպես էլ հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տեղամասերի թվաքանակը ընտրական տարածքների համաձայն

Ազգային փոքրամասնություններով հոծ բնակավայրերի հաշվառումով, ԿԸՀ-ն բացեց 337 տեղամաս 12 ընտրական տարածքում. 1) #11 Սագարեջո (Իորմուղանլո), 12 տեղամաս; 2) #15 Լագոդեխի (Կաբալի). 6 տեղամաս; 3) #17 Թելավի (Ղարաջալա). 4 տեղամաս; 4) #21 Գարդաբանի. 32 տեղամաս; 5) #22 Մառնեուլի. 81 տեղամաս; 6) #23 Բոլնիսի. 42 տեղամաս; 7) #24 Դմանիսի. 32 տեղամաս; 8) #25 Ծալկա. 16 տեղամաս; 9) #26 Թեթրիծղարո. 5 տեղամաս; 10) #37 Ախալցիխե. 8 տեղամաս; 11) #40 Ախալքալաքի. 63 տեղամաս; 12) #41 Նինոծմինդա. 36 տեղամաս:

Ընտրական վարչության ազգային կազմը

ԿԸՀ-ից ստացված տվյալների համաձայն, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների շրջանում 2774 ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ էին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների ադրբեջանական ծագման անդամներն ըստ ընտրական տարածքների. #11 Սագարեջոյի տարածք. 38 անդամ; #15 Լագոդեխի տարածք. 6 անդամ; #17 Թելավի տարածք. 20անդամ; #21 Գարդաբանի տարածք. 100 անդամ; #22 Մառնեուլի տարածք. 584 անդամ; #23 Բոլնիսի տարածք. 251 անդամ; #24 Դմանիսի տարածք. 218 անդամ; #25 Ծալկայի տարածք. 24 անդամ – ընդամենը տեղամասային ընտրական հանձնաժողովների ադրբեջանական ծագումով անդամներ՝ 1241 մարդ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների հայկական ծագումով անդամներ ըստ ընտրական տարածքների. #21 Գարդաբանի տարածք. 5 անդամ; #22 Մառնեուլի

տարածք. 87 անդամ, #23 Բոլնիսի տարածք. 31 անդամ; #25 Ծալկայի տարածք. 140 անդամ; #37 Ախալցիխեի տարածք. 92 անդամ; #40 Ախալքալաքի տարածք. 797 անդամ; #41 Նինոծմինդայի տարածք. 381 անդամ- ընդամենը տեղամասային ընտրական հանձնաժողովների հայկական ծագումով անդամներ՝ 1533 մարդ:

5. Ընտրողների գրանցում

Նախագահի՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի հրամանագրով ստեղծվեց ընտրողների ցուցակների ճշգրտումն ապահովող հանձնաժողով: Նշված հանձնաժողովը ներկայացնում էր կառավարող կուսակցության և մի քանի ընդդիմադիր կուսակցությունների միջև ձեռքբերված ընտրական համակարգի բարեփոխման մասին համաձայնության մասը: Վեց ընդդիմադիր կուսակցություն հրաժարվեց այս հանաձայնությունից, քանզի նրանց դիրքորոշմամբ, այն չէր ապահովում արդարացի ընտրական համակարգ: Հանձնաժողովի 14 անդամ քաղաքական կուսակցություններից էին, այդ թվում յոթը՝ «Միասնական ազգային շարժումից»:

Հանձնաժողովում ներկայացուցիչ ունեին հետևյալ կուսակցությունները. Քրիստոնեա-ժողովրդավարական շարժումը՝ խորհրդարանային փոքրամասնության լիդերի կուսակցությունը, «Նոր աջերը», «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը», Ազգային-ժողովրդավարական կուսակցությունը, «Վրաստանի եվրոպական ժողովրդավարները» («Մենք ինքներս» նախկին կուսակցությունը), Վրաստանի ժողովրդավարական կուսակցությունը, Քրիստոնեա-ժողովրդավարական ժողովրդական կուսակցությունը: Հանձնաժողովի նախագահ ընտրվեց ընդդիմության ներկայացուցիչը: Հանձնաժողովի 7 անդամներ ընտրվեցին ոչկառավարական կազմակերպություններից, այդ թվում ընտրությունների դիտորդական խումբ «Նոր սերունդ՝ նոր նախաձեռնությունը»: PMMG-ն հրաժարվեց հանձնաժողովի անդամությունից:

Ընտրական օրենսգրքում մտցված փոփոխությունների համաձայն, վերստուգման գործընթացի ավարտից հետո հանձնաժողովի կողմից հաստատված և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղարկված ընտրացուցակները կներկայացնեն ընտրողների ընդհանուր ցուցակը:

2012 թվականի օգոստոսի 1-ին Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունեց ընտրողների համընդհանուր ցուցակը՝ ընտրողների ցուցակների ճշգրտումն ապահովող հանձնաժողովի նախագահից: Մամուկա Կացիտաձեն ցուցակի էլեկտրոնային տարբերակը փոխանցեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Զուրաբ Խարատիշվիլիին: Ընտրողների տվյալները ցուցակում արտացոլված էին 2012 թվականի հուլիսի 31-ի դրությամբ:

Ընտրողների ցուցակների ճշգրտման հանձնաժողովը ստուգեց 3.483,142 ընտրողի «Կարդակարի» սկզբունքով: Հանձնաժողովի նախագահ Մամուկա Կացիտաձեի հայտարարությամբ, պարզվեց, որ 25,949 ընտրող վախճանված էր, 291,871 գտնվում էր արտասահմանում, 132,156 հանված էր գրանցման վայրից, 649,839 ընտրող ներկայացնում էր երկրի ներքին գաղթական (միգրանտ), իսկ 183,621-ի հետ չեն կարողացել կապվել: Հանձնաժողովը ընտրացուցակների ճշգրտումն իրականացնում էր մինչև սեպտեմբերի մեկը: Ցուցակի վերստուգման գործընթացն ավարտվեց սեպտեմբերի 15-ին:

Չնայած դրան, համընդհանուր ցուցակների ստուգման կապակցությամբ գոյություն ուներ որոշակի տարակարծություն: «Վրացական երազանք» կոալիցիան համառորեն պահանջում էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովից, այսպես կոչված, «գրված» ընտրողներին հանել համընդհանուր ընտրացուցակից: Կոալիցիայի ներկայացուցիչ Զաքարիա Քուցնաշվիլին հայտարարեց, որ ցուցակում կար 189,000 «գրանցված» ընտրող, ովքեր չունեին ձայն տալու իրավունք: Քուցնաշվիլին մեղադրում էր կառավարությանը ընտրությունները օրինականորեն կեղծելու փորձի մեջ:

Զ. Քուցնաշվիլիի կարծիքով, Վրաստանի խորհրդարանը պետք է ընդուներ [համապատասխան] փոփոխություններ Վրաստանի ընտրական օրենսդրությունում: Նրա հայտարարությամբ անձը, ում գրանցումը վերացել է բնակարանի սեփականատիրոջ դիմումի և արդարադատության նախարարության որոշման հիման վրա, չպետք է լիներ ցուցակում մտցված գրանցման հին հասցեի վրա: Այդպիսի ընտրողների թիվն այսօր կազմում է 189,000 մարդ: Բացի դրանից, Զ. Քուցնաշվիլիի խոսքերով, ընտրողները, ովքեր վաճառել են բնակելի տունը, բայց դուրս չեն գրվել գրանցումից հին հասցեի վրա, ձայն պետք է տան նոր բնակության հասցեի համաձայն կամ անցնեն գրանցում նոր սեփականատիրոջ համաձայնությամբ: Դրա հետ միասին, կոալիցիայի ներկայացուցչի հայտարարությամբ, եթե ընտրողը չունի ընթացիկ բնակության վայր, կամ նոր սեփականատերը հրաժարվում է նրան գրանցել սեփական հասցեի վրա, այդպիսի ընտրողը գրանցում պետք է անցնի քաղաքացիական ռեեստրում և ստանա ընտրողի կարգավիճակ առանց գրանցման հասցեի:

Մի քանի այլ քաղաքացիական հասարակական կազմակերպություն, այդ թվում ընտրողների լիգան, կասկած արտահայտեց ընտրողների ցուցակի ճշգրտության կապակցությամբ:

6. Թեկնածուների գրանցում

ԿԸՀ-ի կողմից փոխանցված տվյալների համաձայն, հետևյալ քաղաքական կուսակցությունները և ընտրական դաշինքները գրանցվել են 2012 թվականի հոկտեմբերի 1-ի խորհրդարանական ընտրությունների համար.

2012 թվականի հոկտեմբերի 1-ի խորհրդարանական ընտրությունների համար գրանցված

Քաղաքական կուսակցությունները

1. Քաղաքական միավորում «Կախա Կուկավա – ազատ Վրաստան» համար 1
2. «Ազգային ժողովրդավարական կուսակցություն» - համար 4
3. «Միասնական ազգային շարժում – ավելի օգուտ ժողովրդին» - համար 5
4. «Հանուն արդար Վրաստանի» - համար 9
5. «Ժողովրդական շարժում» - համար 17
6. «Ազատություն՝ Զվիադ Գամսախուրդիայի ճանապարհը» - համար 19
7. Քաղաքական միավորում «Ջոնդի Բաղաթուրիա – վրացական դասի» - համար 23
8. Քաղաքական միավորում «Նոր աջեր» - համար 24
9. «Ժողովրդական կուսակցություն« - համար 26
10. «Մերաբ Կոստավայի ընկերություն» - համար 30
11. «Ապագա Վրաստան» - համար 35
12. «Վրաստանի աշխատավորների խորհուրդ» - համար 36
13. «Շալվա Նաթելաշվիլի՝Վրաստանի լեյբորիստական կուսակցություն» - համար 38
14. «Վրաստանի սպորտսմենների ընկերություն» - համար 40

2012 թվականի հոկտեմբերի 1-ի խորհրդարանական ընտրությունների համար գրանցված

Ընտրական դաշինքներ,

1.«Գիորգի Թարգամաձե – քրիստոնեա-ժողովրդավարական շարժում» համար 10 Դաշինքում միավորված կուսակցություններ.

- «Քրիստոնեա-ժողովրդավարական շարժում»
- «Վրաստանի եվրոպացի ժողովրդավարներ»

2. «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» համար 41

Դաշինքում միավորված կուսակցություններ.

- Քաղաքական միավորում «Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան»

- «Վրաստանի պահպանողական կուսակցություն»
- Քաղաքական շարժում «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը»
- «Վրաստանի հանրապետական կուսակցություն»
- Քաղաքական միավորում «Մեր Վրաստանը-ազատ ժողովրդավարներ«
- Քաղաքական միավորում «Ազգային համաժողով»

7. Նախընտրական քարոզարշավ

Նախորդ ընտրությունների համեմատությամբ, տրված մոնիտորինգի ծրագիրը բացահայտեց քաղաքական կուսակցությունների և ընտրական դաշինքների աճող հետաքրքրությունը, որպեսզի նախընտրական քարոզարշավի գործընթացում ավելի ուշադրություն հատկացվի փոքրամասնությունների հարցերին և ազգամիջյան հարաբերություններին: Քաղաքական կուսակցությունների և ընտրական դաշինքների կողմից համապատասխանաբար ընտրվել էր քարոզարշավի լեզուն փոքրամասնությունների տարածաշրջաններում տեղական ընտրողների հետ արդյունավետ հաղորդակցություն հաստատելու նպատակով:

Մի քանի քաղաքական կուսակցություն և ընտրական դաշինք, այդ թվում «Միասնական ազգային շարժումը», «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինքը, «Գիորգի Թարգամաձե – քրիստոնեա-ժողովրդավարական միավորում» ընտրական դաշինքը և «Նոր աջեր» քաղաքական միավորումը ընդգրկված էին փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում տեղական ընտրողների համար գլխավոր առաքումները փոխանցելու համար:

Թերևս, ընտրական քարոզարշավի ամենաակտիվ կուսակցությունն էր «Միասնական ազգային շարժումը», որին հետևում էր «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինքը, «Գիորգի Թարգամաձե-քրիստոնյա-ժողովրդավարական միավորում» ընտրական դաշինքը: Պետք է նշել, որ բոլոր հիշատակված քաղաքական կուսակցությունները բացած ունեն օֆիսներ ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված շրջանների մեծամասնությունում: Ինչ վերաբերում է մնացած քաղաքական կուսակցություններին և ընտրական դաշինքներին, դրանք փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում չէին հոգացել արդյունավետ ընդգրկվածություն ֆինանսական ռեսուրսների բացակայության, ինչպես նաև տեղական իշխանության կողմից ստեղծված պատնեշների պատճառներով: Թերևս, մի քանի ընդդիմադիր կուսակցության որոշ ներկայացուցիչներ ընտրական քարոզարշավի ժամանակ այցելեցին փոքրամասնությունների տարածաշրջաններ:

Այն ժամանակ, երբ բոլոր քաղաքական կուսակցությունները և ընտրական դաշինքը ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական ցուցակներում ունեին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, միայն դրանցից մի քանիսն էր հաշվի առել ազգային փոքրամասնությունների կարիքները և հիմախնդիրները և համապատասխանաբար մտցրել սեփական քաղաքական ծրագրերի մեջ: Միայն «Միասնական ազգային շարժումը», «Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական դաշինքը, «Գիորգի Թարգամաձե – քրիստոնեա-ժողովրդավարական միավորում» ընտրական դաշինքը և «Նոր աջեր» քաղաքական միավորումը շոշափեցին ազգային փոքրամասնությունների իրավունքների և հետաքրքրությունների պաշտպանության և աջակցության հարցերը իրենց քաղաքական հարթակներում: Սակայն, չնայած նման առաջընթացին, ազգային փոքրամասնությունների իսկական հիմախնդիրների լուսաբանման ինտենսիվությունը և մասշտաբը այնուամենանիվ բավարար չէր: Կարծես բոլոր ծրագրերը պարունակում էին ընդհանուր հայտարարություններ փոքրամասնությունների հետաքրքրություններին աջակցության մասին, թերևս առանց նրանց կարիքների և հիմախնդիրների արդյունավետ լուծման ուղիների մասին լուսավոր և կոնկրետ առաջարկություններ ներկայացնելու:

Ընդհանուր առմամբ, քարոզարշավը Քվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախեթում ընթացավ բավականին քաղաքականացված միջավայրում:

Քարոզարշավի հիմական ձև էին ներկայացնում համեմատաբար փոքր մասշտաբի միջոցառումները և հավաքները, լայնամասշտաբ ցույցերի փոխարեն: Միայն «Միասնական ազգային շարժումը և «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինքը անցկացրեցին լայնամասշտաբ գործողություններ հատկապես այնպիսի մեծ տարածաշրջանային կենտրոններում, ինչպիսիք են Ռուսթավին և Ախալցիխեն:

Քարոզարշավի գովազդային բիլբորդները, որոնք գլխավորապես պատկանում էին «Միասնական ազգային շարժմանը», խոյացել էին Թբիլիսիի և տարածաշրջանների մի քանի մեծ քաղաքներում: Ընդդիմադիր կուսակցությունների մեծամասնությունը հայտարարում էր, որ իրենք չէին կարողանում հավասարապես հասնել կոմերցիոն բիլբորդներին և հաստատում էր, որ գովազդային աֆիշների տեղադրման տեղերը նախապես զբաղեցված էին «Միասնական ազգային շարժման» կողմից և որ սահմանված էին բիլբորդների վրա քաղաքական գովազդ տեղադրելու բավականին բարձր գներ:

Ընտրական քարոզարշավին ուղեկցում էր բավականին հաճախակի մեղադրանքներ սպառնալիքների մասին, այդ թվում թեկնածուների, կուսակցության ակտիվիստների, պետական աստիճանավորների, ուսանողների և շարքային մարդկանց կողմից: PMMG-ի կողմից ուսումնասիրված բազմաթիվ կոնկրետ մեղադրանքների շրջանում, մի քանիսը հավաստի հայտնվեց: Այդ թվում էր տեղական իշխանության կողմից քարոզարշավի գործընթացին մասնակցությունը դադարեցնելու նպատակով ընդդիմության աջակիցների վրա ճնշման մի քանի հաստատված դեպք: Այս ձևի ճնշումը գլխավորապես իրականացվում

էր ուսուցիչների, բժիշկների և ուսանողների վրա: Եղել է, նաև դպրոցի ղեկավարության և »Միասնական ազգային շարժման» պաշտոնական ներկայացուցիչների կողմից ուսուցչի նկատմամբ սպառնալիքի մի քանի հաստատված դեպք, որի ժամանակ նրանց սպառնում էին աշխատանքը կորցնելով, եթե կշարունակեին ընդդիմադիր կուսակցությունների հետ աշխատանքը:

Հայտնի դարձավ Մառնեուլի մունիցիպալիտետում տեղական իշխանության բարձր աստիճանի ներկայացուցչի կողմից PMMG-ի երկարաժամկետ դիտորդի վրա ճնշման փորձի մասին, վարչական ռեսուրսների չարաշահման փաստի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն որոնելու ժամանակ:

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում, մասնավորապես, Ադիգենում «Բիձինա Իվանիշվիլի–վրացական երազանք» ընտրական դաշինքի ակտիվիստներին զգուշացրեցին, որ դադարեցնեն իրենց աջակցությունը: Բացի դրանից, տեղական իշխանությունը խոչընդոտում էր ընդդիմության հավաքներ անցկացնելուն: Ադիգենի տեղական իշխանությունը, մասնավորապես, ոստիկանությունը ստիպում էր տեղական բիզնես-շրջանին հրաժարվել դաշինքի հետ համագործակցությունից և համապատասխանաբար նրանց չվարձակալել շենքեր տեղական օֆիսների բացման նպատակով:

«Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական դաշինքի կողմից օգոստոսի 19-ին, ք. Ռուսթավում մինչև կազմակերպված բազմամարդ ակցիայի սկսվելը, դաշինքին աջակցող Միխեիլ Ծիխարիշվիլին ձերբակալվեց ոստիկանության կողմից կեղծ մեղադրանքի հիման վրա, ինչպես դա հայտարարում են նրա բարեկամները և դաշինքի ներկայացուցիչները: Ձերբակալվածին բերեցին տեղական ոստիկանության շենք, որտեղ նրա նկատմամբ գործադրվեց ճնշում, սպառնալիք և անպատվություն, և միայն երկրորդ օրը առավոտյան թողեցին:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի, մասնավորապես, Մառնեուլի բնակիչ «Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական դաշինքին աջակցող Աբեսալոմ Քուչաշվիլիի նկատմամբ իրականացվեց սպառնանք և անպատվություն տեղական ոստիկանության կողմից: Նրան զգուշացրին, որ եթե չի դադարեցնի դաշինքին աջակցությունը, նրան կձերբակալեն:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում ավելացավ պատժված ուսանողների թիվը, ովքեր հագել էին «Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» մայկաներ: Հայտնի դարձավ մի քանի փաստի մասին, որոնց համաձայն, ուսուցիչների նկատմամբ իրականացվեց սպառնանք և ճնշում դպրոցի ղեկավարության կողմից, քանզի նրանք հագել էին դաշինքի մայկաներ: Օրինակ, Ռուսթավի 8-րդ հանրային դպրոցի աշակերտը (ով չցանկացավ իր ով լինելը բարձրաձայնել) պատժվեց՝ դպրոցի մանդատուրը նրան ուժ գործադրելով տարավ դպրոցի տնօրենի մոտ (Քեթևան Խվադագիանի), ով հանեց մայկան և դեն նետեց:

Մայիսի 14-ին, Մառնեուլի մշակույթի տանը «Բիձինա Իվանիշվիլի–վրացական երազանք» դաշինքի կողմից պլանավորված ընտրողների հետ հանդիպմանը նախապատրաստվելու գործընթացում, տեղական ակտիվիստներին հետևում էին ոստիկանության մեքենաները և այդպիսով ձգտում էին խոչընդոտել միջոցառմանը նախապատրաստվելուն:

Մայիսի 14-ին «Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական դաշինքին աջակցող Օմար Խարաիշվիլուն կալանավորմամբ սպառնաց Ծերեթելի և Սաիմերլո գյուղերի գյուղապետ Շալվա Կուպրաիշվիլին այն պատճառով, որ նա աջակցում էր ընտրական դաշինքին:

Հայտնի դարձավ Մառնեուլի մունիցիպալիտետում տեղական իշխանության բարձր աստիճանի ներկայացուցչի կողմից PMMG-ի երկարաժամկետ դիտորդի վրա ճնշման փորձի մասին, վարչական ռեսուրսների չարաշահման փաստով հավելյալ տեղեկատվություն որոնելու ժամանակ:

Հունիսի սկզբին «Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական դաշինքը օֆիս բացեց Ախալքալաքում Մելիք Ռայիսյանից վարձակալած շենքում: Օֆիսը բացելուց կարճ ժամանակ անց Ռայիսյանը թողեց Վրաստանը: Հաջորդ օրն ևեթ Վրաստանի ներքին գործերի նախարարությունը կատարեց հայտարարություն, որի համաձայն Ռայիսյանը հետախուզման մեջ էր: Ավելին, Գիորգի Մխչյանը, Ռայիսյանի մոտ բարեկամը, ով որոշակի ֆինանսական գործողություններ էր իրականացնում Ռայիսյանի համար, այդ նույն ժամանակ աշխատում էր որպես նրա վարորդ և զուգահեռաբար հանդիսանում էր դաշինքի տեղական նախաձեռնողական խմբի նախագահը, կալանավորվեց հունիսի 23-ին, գիշերվա ժամը 11-ին «Պետական ունեցվածքը անօրեն յուրացնելու» մեղադրանքով: Ռայիսյանի Գործը փոխանցվեց Ինտերպոլին և ներկայումս նա որոնվում է դատարանի որոշման հիման վրա, որով նա դատապարտվել էր 6 տարվա ազատազրկման:

«Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական դաշինքը փորձեց օֆիս բացել Նինոծմինդայում: Դաշինքի ներկայացուցիչները շենքի սեփականատերերին առաջարկեցին մեծ գումար: Սակայն ոչ մի գրասենյակային տարածք չվարձակալվեց դաշինքի համար, հավանաբար այն պատճառով, որ տեղական իշխանության կողմից մեծ ճնշում և սպառնալիք էր իրականացվում սեփականատերերի վրա: Տարածված բամբասանքի համաձայն, տեղական բնակիչներից մեկը համաձայն էր տարածքը վարձակալման տալ: Սակայն նույն օրը նրա հորը կալանավորեցին «անօրեն զենք կրելու» մեղադրանքով, իսկ նրա որդու խանութը կալանավորեցին հարկերը չվճարելու պատճառով: Մեկ շաբաթ հետո հորը թողեցին: Տեղական բնակչության շրջանում տարածված բամբասանքի համաձայն, յուրաքանչյուր տեղական բնակիչ նույն վիճակի մեջ էր հայտնվում, եթե որևէ մեկը կհամարձակվեր ընդդիմությանը աջակցել և վարձակալել գրասենյակային տարածք:

Հունիսի 15-ին, Ախալքալաքում «Բիձինա Իվանիշվիլի-վրացական երազանք» ընտրական

դաշինքի տեղական ներկայացուցիչները դիմեցին ՍՊԸ «Սիլքնետ» կապի ընկերությանը՝ հեռախոսով և համացանցով ապահովելու խնդրանքով: Ընկերության աշխատակիցները սկսեցին աշխատանքը, որոնք չավարտվեցին Համացանց-բաշխիչ գրատախտակի վրա «Ազատ տեղ» չունենալու պատճառներով: Չնայած կարճ ժամանակամիջոցում հիմախնդիրը կարգավորելու խոստմանը, 2 ամսվա ընթացքում ոչինչ չարվեց: Դաշինքի ներկայացուցիչները մեղադրում էին ընկերությանը, որ նա չապահովեց համացանցային կապը և գտնում էին, որ սա քաղաքականապես մոտիվացված դեպք էր, քանզի ընկերությունը պատկանում էր կառավարությանը մոտ անձի:

Բժիշկ-էնդոկրինոլոգ Իա Թաքթաքիձեին ազատեցին աշխատանքից (Նինոծմինդայի հիվանդանոց) իր քաղաքական ակտիվության պատճառով: Նրան ազատեցին Ախալքալաքում «Բիձինա Իվանիշվիլի - վրացական երազանք» ընտրական դաշինքի օֆիս բացելուց կարճ ժամանակամիջոց անց, որտեղ Իա Թաքթաքիձեի քույրն այցելում էր որպես ընդդիմությանը աջակցող: Նախ և առաջ Թաքթաքիձեին նախազգուշացրին տեղական իշխանության բարձր կարգի աստիճանավորները և հիվանդանոցի հոգաբարձուները: Բարեկամների միջոցով նա ստացավ զգուշացում այն մասին, որ եթե չի դադարեցնի քաղաքական գործունեությունը, նա կկորցնի աշխատանքը: Ավելի ուշ տիկին Թաքթաքիձեին ազատեցին աշխատանքից, քանզի նրա ամուսինը շարունակում էր դաշինքի հետ համագործակցությունը:

Ախալքալաքում «Բիձինա Իվանիշվիլի – վրացական երազանք» ընտրական դաշինքի ակտիվ անդամ Ազատ Շիպակցյանին նախազգուշացրին, որ նրա տիկինը, ով աշխատում էր հիվանդանոցում, կկորցնի աշխատանքը, եթե նա չի դադարեցնի քաղաքական գործունեությունը: Տիկին Շիպակցյանը հարկադրված էր վերցնել «հարկադրական արձակուրդ», քանզի նրա ամուսինը շարունակում էր քաղաքական գործունեությունը:

Պետության և կուսակցության միջև տարբերության սահմանը հաճախ կորած էր Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում: Եղան դեպքեր, երբ տեղական կառավարման սոցիալական ծրագրերը համակցված էին «Միասնական ազգային շարժման» նախընտրական գործընթացի միջոցառումների հետ: Օրինակ, լայնամասշտաբ հանրային միջոցառումներ (համերգներ, թատերական ներկայացումներ և այլն) անց էին կացվում Ախալքալաքի վրացական գյուղերում, որի ֆինանսավորման միջոցները չէին հաշվարկված տեղական բյուջեում: Բացի դրանից, Ախալքալաքում մի քանի մեծ նախագծի, այդ թվում ինչպիսիք են նախկին զինվորական քաղաքի տարածքի վրա բնակելի շենքերի տանիքների գցման ավարտման ժամանակաշրջանը համընկնում էր ընտրական ժամանակաշրջանին:

Բացի դրանից հաճախ էին աշխատանքային պարտականությունները կատարելիս՝ պետական աստիճանավորների մասնակցության դեպքերը «Միասնական ազգային շարժման» մեծամասնական թեկնածուների ընտրական քարոզարշավներին: Օրինակ, հունիսի 23-ին խորհրդարանի փոխսնակ Գիգի Ծերեթելին հանդիպեց Քվեմո Քարթլիի

Ծերեթելի գյուղի ընտրողների հետ: Նրան ուղեկցում էր Քվեմո Քարթլիի նահանգապետ Դավիթ Կիրկիտաձեն, Մառնեուլի մունիցիպալիտետի գամգեբելի Զազա Դեկանոիձեն, Ծերեթելի և Սաիմերլո գյուղերի գյուղապետ Շալվա Կուպրաիշվիլին, ինչպես նաև տեղական իշխանության այլ ներկայացուցիչներ: Հանդիպումից հետո պարոն Գ.Ծերեթելին տեղական իշխանության ներկայացուցիչների հետ միասին հանդիսավորապես բացեց նորակառույց եկեղեցի սահմանակից Սաիմերլո գյուղում: Պետք է նշել, որ տեղական բյուջեով նախատեսված էր միայն ցանկապատի անցկացում եկեղեցու շուրջբոլորը: Նմանապես զարմանալի էր այն, թե եկեղեցու շինարարությունը սկսվել էր, արդյոք, տեղական բնակչության խնդրանքո՞վ:

8. Լրատվամիջոց

Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում գործում է մի քանի տեղական լրատվամիջոց. ա)Մառնեուլի հեռուստաընկերություն «Մառնեուլի TV“ (Քվեմո Քարթլի), բ)Բոլնիսի հեռուստաընկերություն «Բոլնելի» (Քվեմո Քարթլի), գ) Ախալցիխեի հեռուստաընկերություն «9-րդ ալիք» (Սամցխե-Ջավախեթի), դ) Ախալքալաքի հեռուստաընկերություն «ԱՏՎ 12» (Սամցխե-Ջավախեթի), ե)Նինոծմինդայի հեռուստաընկերություն «Փարվանա»:

Տեղական լրատվամիջոցները, Վրաստանի հանրային հաղորդիչի և «Ռուսթավի 2», «Իմեդի TV“, „Մզե» հեռուստաընկերությունների հետ միասին, որոնք հեռարձակվում են ողջ երկրի մասշտաբով, ներկայացնում էին տեղական բնակչության շրջանում նորությունների և լրատվության տարածման հիմնական աղբյուրը: «Կավկասիա» հեռուստաընկերությունը հեռարձակվում է միայն Թբիլիսիում և նշված տարածաշրջանների բնակչության համար անհասանելի է: Բացի դրանից, ընդդիմադիր տրամադրություն կրող «Մաէստրո» և «9-րդ ալիք» հեռուստաընկերությունները տարածաշրջաններում դիտելու մատչելիությունը հնարավոր է միայն սատելիտների միջոցով, քանզի տեղական կաբելային հեռուստատեսությունները (եթե այդպիսին գոյություն ուներ) չէին միացնում դրանք իրենց հաղորդումների ցանցում:

9. Տեղական և միջազգային դիտորդներ

ԿԸՀ-ն փոփոխություններ մտցրեց ընտրությունների միջազգային դիտորդական կազմակերպությունների և միջազգային դիտորդական գրանցման հրահանգներում: Նոր փոփոխությունների համաձայն, գրանցում կանցնի այն միջազգային կազմակերպությունը, որի կանոնադրությունը նախատեսում է ընտրությունների մոնիտորինգ, մարդու իրավունքների պաշտպանություն և որի գործունեությունը հիմնվում է միջազգայնորեն

ճանաչված հետևյալ սկզբունքների վրա. ա) Վրաստանի օրենսդրության, ինքնիշխանության և մարդու իրավունքների միջազգային նորմերի հարգում, բ) ընտրական գործընթացի խոչընդոտումներից խուսափում, գ) քաղաքական անկողմնապահություն, դ) ընտրական գործընթացի մասնակիցներից ֆինանսական անկախություն և ֆինանսավորման աղբյուրների թափանցիկություն, ե) միջազգային ընտրական դիտարկման սկզբունքների հռչակագրով ճանաչված դրույթների պաշտպանություն:

Գրանցման հրահանգներում նոր փոփոխությունների մտցնումը բողոքարկեցին մի քանի տեղական քաղաքացիական հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, որոնք հայտարարում էին, որ նոր կարգավորող փաստաթուղթը կանխավ մտածված է ընդունվել, որպեսզի խանգարեր իշխանության նկատմամբ քննադատաբար տրամադրված կամ ինչ-որ չափով ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների կամ ընտրական դաշինքների հետ կապված որոշակի դիտորդական կազմակերպություններին մոնիտորինգի իրականացման մեջ:

Պաշտոնական տվյալներով, խորհրդարանական ընտրությունների մոնիտորինգի նպատակով, ԿԸՀ-ն հրաժարվեց գրանցել «Ռուսաստանի Դաշնության հասարակական պալատին», «Կենեսարի խան« հիմադրամին և նաև «Միջազգային թափանցիկություն – Լատվիա» հիմադրամին (քանզի, այս վերջին կազմակերպության գործունեության մանդատը ենթադրում է կաշառակերության դեմ պայքար և ոչ թե ընտրությունների մոնիտորինգի իրականացում):

Բացի դրանից, ընտրությունների մոնիտորինգի նպատակով, ԿԸՀ-ն գրանցումը մերժեց նաև տեղական 6 կազմակերպության. «Միակամություն հասարակության իրավունքների համար», «Նոր սերունդ ժողովրդավարական Վրաստանի համար», «Կավկասիոնի սիներգիա», «Վրաստանի մարդկանց և կալանավորների իրավունքների պաշտպանության ընկերություն», »Վրաստանի ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների պաշտպանության Իմերեթի տարածաշրջանային միություն« և «Արդարության հավատ»:

2012 թվականի սեպտեմբերի 30-ի տվյալներով, ԿԸՀ-ի կողմից գրանցվեց 62 115 տեղական ոչկառավարական կազմակերպություն ապագա խորհրդարանական ընտրությունների մոնիտորինգի ծրագիր իրականացնելու նպատակով: Ինչ վերաբերում է միջազգային դիտորդներին, ԿԸՀ-ն գրանցեց 1641 միջազգային կազմակերպություն:

Հիմական տեղական դիտորդական կազմակերպությունները ներկայացնում էին. Արդարացի ընտրությունների և ժողովրդավարության միջազգային ընկերությունը, «Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան», միջազգային թափանցիկություն Վրաստանը, Նոր սերունդ, նոր նախաձեռնությունը, ինչպես նաև համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանը»(PMMG): Թերևս PMMG-ն եղել է հիմական տեղական ոչկառավարական կազմակերպությունը, որն իրականացրեց քվեարկության օրվա մոնիտորինգի ծրագիր ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված

տարածաշրջաններում: Ծրագրի իրականացման գործընթացում PMMG-ն ակտիվորեն համագործակցում էր վերը նշված կազմակերպությունների հետ և վարում էր համակարգված աշխատանք ինչպես քվեարկության նախորդ, այնպես էլ քվեարկության օրը:

10. Ձայն տալ, հաշվել և տաբուլացիա

Ընտրական տեղամասերի բացում

Այն ընտրական տեղամասերի մեծամասնությունը, որտեղ իրականացվեց մոնիտորինգ, բացվեց օրենքով սահմանված ժամանակ: Միայն մեկ դեպք եղավ, երբ ընտրական տեղամասը բացվեց ուշացումով՝ Բոլնիսի 23-րդ ընտրական տարածքի #49 ընտրական տեղամասը առավոտյան ժամը 8-ին պատրաստ չէր ընդունելու ընտրողներին:

Ընդհանրապես, բոլոր ընտրական տեղամասերում կար համապատասխան ընտրական նյութ, ինչպես նաև քվեարկության համար անհրաժեշտ գույք, որը համապատասխանում էր օրենքով սահմանված պահանջներին: Թերևս, կարճաժամկետ դիտորդները բացահայտեցին որոշակի անհամապատասխանություններ նախապատրաստական փուլում: Նրանք ամրագրեցին դեպք, երբ ընտրական տեղամասում չկար օրենքով սահմանված նմուշի համապատասխան ընտրական նյութ, այդ թվում տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիք (Գարդաբանի 21- ընտրական տարածքի #40 ընտրական տեղամաս):

Ամրագրվեցին դեպքեր, երբ ընտրողների ողջ թվաքանակը ընտրական տեղամասի ընդհանուր ցուցակում զգալիորեն գերազանցում էր տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցված քվեաթերթիկների թվաքանակին (այսպիսի խախտում բացահայտվեց հետևյալ տեղամասերում. Մառնեուլի 22-րդ ընտրական տարածքի #85 ընտրական տեղամաս, Մառնեուլի 22-րդ ընտրական տարածքի #5 ընտրական տեղամաս, Ախալքալաքի 40-րդ ընտրական մարզի #67-րդ ընտրական տեղամաս, Նինոծմինդայի 41-րդ ընտրական տարածքի #18 ընտրական տեղամաս, Դմանիսի 24-րդ ընտրական տարածքի #24 ընտրական տեղամաս, Սագարեջոյի 11-րդ ընտրական տարածքի #44 ընտրական տեղամաս, Մառնեուլիի 22-րդ ընտրական տարածքի #4 ընտրական տեղամաս)):

Ընդհանուր առմամբ, ընտրական տեղամասերի բացման ընթացակարգն անցկացվեց ընտրական օրենսդրությանը համապատասխան: Թերևս, տեղեկատվություն ստացվեց մի քանի դեպքերի մասին, որոնց համաձայն ընթացակարգերը իրականացվեցին որոշակի խոչընդոտներով:Այսպիսի դեպքերի շրջանում այնպիսի փաստեր էին, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կողմից կատարվելիք գործառույթները չեն եղել բաշխված գաղտնի վիճակահանությամբ (Սագարեջոյի 11-րդ ընտրական տարածքի #46 ընտրական տեղամաս): Բացի դրանից, տեղ ուներ նաև այսպիսի դեպք, երբ

ստուգողական թերթը չէր լրացվել չափանիշային ընտրական ընթացակարգի համաձայն (Դմանիսի 24-րդ ընտրական տարածքի #21 ընտրական տեղամաս): Կարճաժամկետ դիտորդի կողմից ամրագրվեց դեպք, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովի և գրանցողի կնիքները համապատասխանաբար չէին զմռսվել (փսասված էին) ընտրական տեղամասը բացելիս (Բոլնիսի 23-րդ ընտրական տարածքի #49 ընտրական տեղամաս), ինչպես դա պահանջում է ընտրական օրենսդրությունը:

Ինչպես կարճաժամկետ դիտորդի կողմից էր եղել ամրագրված, համարյա բոլոր ընտրական տեղամասերում գաղտնիության պայմանները պաշտպանված էին:

Քվեարկության և ընտրական տեղամասերի փակում

Կարճաժամկետ դիտորդի կողմից ամրագրվեց, որ բոլոր ընտրական տեղամասերում գրանցողները ընտրողներից պահանջեցին ցույց տալ Ինքնությունը հաստատող վկայականը: Գրանցվեց մեկ դեպք, երբ ընտրողը փորձեց վարորդական իրավունքով ձայն տալ: Սակայն, տեղամասային ընտրական հանձնաժողովը մերժեց ընտրողին գրանցելը և ձայն տալը, չնայած հանձնաժողովի նախագահի կողմից արտահայտված տարակարծությանը:

Բոլոր ընտրական տեղամասերում ընտրողները ստորագրում էին գրանցողի սեղանի ցուցակում իրենց անուն-ազգանվան երկայնքով: Ամրագրվեց միայն մեկ դեպք Դմանիսի 24-րդ ընտրական տարածքի #24 ընտրական տեղամասում, երբ երեք ընտրողներ ձայն տվեցին առանց ընտրողների միասնական ցուցակում գրանցում անցնելու:

Կարճաժամկետ դիտորդների կողմից ամրագրվեցին մի քանի դեպքեր, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, ինչպես նաև ընտրական տեղամասում գտնվելու թույլտվություն ունեցող անձինք օգնեցին ընտրողին ձայն տալու մեջ, այդ թվում քվեարկության խցիկի ներսում՝ դիտորդը ամրագրեց մի քանի դեպք, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը և նաև դիտորդները Բոլնիսի 23-րդ ընտրական տարածքի #55 ընտրական տեղամասում օգնում էին ընտրողներին ձայն տալու մեջ:

Կարճաժամկետ դիտորդների կողմից ամրագրված ընթացակարգերից մեկի խախտումը վերաբերում էր դրոշմանշմանը: Տեղ գտավ դեպք, երբ Բոլնիսի 23-րդ ընտրական տարածքի #55 ընտրական տեղամասում կարճաժամկետ դիտորդը խնդրեց տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամին կատարել դրոշմանշում դրա պիտանիությունը ստուգելու համար մինչև ընտրական տեղամասի բացումը: Դիտորդը կիրառումից 2 ժամ հետո ստուգեց այդ անգույն հեղուկի հետքը և բացահայտեց, որ ուլտրամանուշակագույն լապտերը չբացահայտեց դրոշմանշման հետքը, հավանական է այն պատճառով, որ հեղուկը ժամկետանց էր: Դրոշմանշման հետ կապված ընթացակարգերի խախտումներ բացահայտվեցին հետևյալ թաղամասերում. Մառնեուլի 22-րդ ընտրական տարածքի #68 ընտրական տեղամաս, Սագարեջոյի 11-րդ ընտրական տարածքի #45 ընտրական

տեղամաս, Բոլնիսի 23-րդ ընտրական տարածքի #36 ընտրական տեղամաս (աչքի էր ընկնում խախտումների հաճախականությամբ), Ախալքալաքի 40-րդ ընտրական տարածքի #40 ընտրական տեղամաս:

Կարճաժամկետ դիտորդների կողմից ամրագրվեցին բազմաթիվ դեպքեր, երբ ընտրողը քվեարկության խցիկ էր մտնում այլ անձի հետ միասին, հավանաբար իր հաշմանդամության պատճառով: Բոլոր նման դեպքերում ընտրողները պատճառաբանում էին ֆիզիկական անօգնականությունը և պահանջում էին ընտրական տեղամասում գտնվող ընտրողների օգնությունը: Բայց, կարճաժամկետ դիտորդների նշումներով, նշված ընտրողների հաշմանդամությունը արտաքնապես նկատելի չի եղել, ինչը համապատասխանաբար հարուցում էր հիմնավոր կասկած, որ իրականում տեղ ունեն ընտրողի ընտրության վրա ազդեցության դեպքերը: Քվեարկության գաղտնիության այսպիսի կոպիտ խախտումներ դրսևորվեցին հետևյալ թաղամասերում. Դմանիսի 24-րդ ընտրական տարածքի #43 ընտրական տեղամաս, Բոլնիսի 23-րդ ընտրական տարածքի #46 ընտրական տեղամաս, Բոլնիսի 23-դ ընտրական տարածքի #55 ընտրական տեղամաս, Բոլնիսի 23-րդ ընտրական տարածքի #18 ընտրական տեղամաս, Սագարեջոյի 11-րդ ընտրական տարածքի #48 ընտրական տեղամաս: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում, հատկապես Դմանիսի և Բոլնիսի ընտրական տարածքներում քվեարկության խցիկում մեկից ավելի անձի մտնելու դեպքերը սիստեմատիկ բնույթ ուներ:

Կարճաժամկետ դիտորդների կողմից ամրագրվեց մի քանի դեպք, երբ միևնույն անձը փորձեց մի քանի անգամ ձայն տալ Բոլնիսի 23-րդ ընտրական տարածքի #45 ընտրական տեղամասում:

Կարճաժամկետ դիտոդների կողմից ամրագրվեց Քվեմո Քարթլիի ազգությամբ ադրբեջանցիներով հոծ բնակեցված տարածաշրջանում ընտրողների ընտրության վրա ազդեցություն գործելու մի քանի դեպք: Ընտրական տեղամասում գտնվող ընտրողները բաց հայտարարում էին «բեշ-բեշ», ինչը ադրբեջանական լեզվով նշանակում է հնգանոց և ինչը միևնույն ժամանակ ներկայացնում էր «Միասնական ազգային շարժմանը» շնորհված ընտրական համարը:

Կարճաժամկետ դիտորդների կողմից նկատվեց մեկ դեպք, երբ գյուղի ղեկավարությունը փորձում էր ուղղակի ազդեցություն գործել ընտրողների վրա, որպեսզի նրանք ձայն տան «Միասնական ազգային շարժման» համար (Ախմետայի ընտրական տարածքի #18 ընտրական տեղամաս):

Ընդհանուր առմամբ բոլոր ընտրական տեղամասերում, որտեղ իրականացվեց մոնիտորինգ, քվեարկության շենքում ընտրողների թվաքանակը կարգավորող անձը ապահովում էր, որ շենքը ծանրաբեռնված չլիներ ժողովրդով: Ամրագրվեց ժողովրդով ծանրաբեռնվելու և խառնաշփոթի միայն մեկ դեպք:

Շատ դեպքերում, փոխադրական քվեատուփով ձայն տալու գործընթացը անցկացվեց սահմանված ընտրական կանոնների և ընթացակարգերի պաշտպանությամբ: Կարճաժամկետ դիտորդների կողմից նկատվեց մեկ դեպք, երբ փոխադրական ընտրատուփի զմուռսը ֆնասված էր: Թերևս տեղական ընտրական հանձնաժողովը չկանգնեցրեց քվեարկության գործընթացը և թույլ տվեց հանձնաժողովի անդամներին, շարունակել ձայն տալու գործընթացի վարչարարությունը փոխադրական քվեատուփի ֆնասված զմուռսի պայմաններում (Գարդաբանի 21-րդ ընտրական տարածքի #9 ընտրական տեղամաս): Բացի դրանից, տեղ գտավ դեպք, երբ ընտրողների անձնական համարները մտցված չէին փոխադրական ընտրատուփի ընտրողների ցուցակում:

Ընտրական տեղամասի փակում և ձայների հաշվում

Կարճաժամկետ դիտորդները ամրագրեցին, որ բոլոր ընտրական տեղամասերում, որտեղ իրականացվեց մոնիտորինգ, երեկոյան ժամը 8-ին հերթում կանգնած ընտրողներին թույլ տրվեց ձայն տալ: Բացի դրանից, ոչ մի ընտրող, ով ընտրական տեղամաս մտավ երեկոյան ժամը 8-ից հետո, չթույլատրվեց ձայն տալ:

PMMG-ի կարճաժամկետ դիտորդները ընտրական տեղամասերում, դրանց փակվելուց հետո, չեն բացահայտվել անձինք, ովքեր այնտեղ գտնվելու իրավունք չեն ունեցել:

Ընդհանուր առմամբ, շատ ընտրական տեղամասերում, որտեղ իրականացվեց մոնիտորինգ, չնայած ամրագրված աննշան ընտրական թերություններին,, այնուամենայնիվ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները ձայները հաշվելու գործընթացում պաշտպանում էին օրենքով սահմանված ընթացակարգերը: Չի ամրագրվել ոչ մի դեպք, երբ թույլտվություն ունեցող կամ առանց թույլտվությամբ անձինք փորձում էին ազդեցություն գործել քվեարկության արդյունքների հանրագումարման վրա: Թերևս եղել է մի քանի բացառություն, այդ թվում դեպք Գարդաբանի ընտրական տարածքում, որտեղ PMMG-ի կարճաժամկետ դիտորդին վտարեցին ընտրական տեղամասից ձայները հաշվելու ժամանակ:

11. Քվեարկության օրվա հետ կապված բողոքներ և հայցեր

Փաստերի և գտնված ապացույցների համաձայն երևում է, որ վերջերս Վրաստանում կայացած խորհրդարանական ընտրությունները շատ տեսանկյուններից տարբերվում են նախորդ ընտրություններից: Այս տեսակետից ձեռք բերված առաջընթացը նշվեց շատ տեղական և միջազգային դիտորդներից կողմից: Ներկայիս ընտրությունների արդյունքներից մեկը ընտրական վարչության անդամների բարելավված արհեստավարժ

որակն է (ընտրական կանոնների, ընթացակարգերի, տեղամասային և տարածքային ընտրական հանձնաժողովների, ինչպես նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասու անձանց, այդ թվում դիտորդների իրավունքները և պարտականությունները), ինչն էլ հնարավոր դարձրին նշանակալիորեն կրճատելու ընտրական օրենսդրության կոպիտ խախտումների դեպքերը, ներառյալ այնպիսի դեպքերը, որոնք լայն հասարակայնության ուշադրության վրա են հենվում: Այդպիսով, PMMG-ի դիտորդները չեն ամրագրել ընտրական կանոնների և ընթացակարգերի կոպիտ խախտման որևէ փաստ: Թերևս ամրագրվեց ընթացակարգերի խախտման մի քանի դեպք, հատկապես ընտրական տեղամասերի բացման և քվեարկության փուլում:

Պետք է նշել, որ դիտորդները արձագանքեցին խախտումներին, այդ թվում ընթացակարգային թերությունների, նախապես հրապարակված հրահանգներին համապատասխան, ընթացակարգային, հետևյալ երկու տեսակի թերությունների վրա.

I) բանավոր դիտողություն տեղամասային ընտրական հանձնաժողովի հասցեով հիմնախնդիրը անհապաղ ուղղելու կամ արմատախիլ անելու նպատակով,

II) Հայցերի կազմում և առաքում տեղամասային և տարածքային ընտրական հանձնաժողովներին, այն դեպքում, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը ոչինչ չձեռնարկեց բանավոր դիտողության հիման վրա հիմնախնդիրը ուղղելու կամ արմատախիլ անելու կապակցությամբ:

Դիտորդների գործունեության մոնիտորինգի արդյունքները բացահայտում են մի քանի հետաքրքիր ուղղություն. բազմաթիվ դեպքերում դիտորդների բանավոր դիտողությունները բավարարվեցին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կամ անդամների կողմից: Միայն մի քանի բողոք կազմվեց, քանզի տեղամասային ընտրական հանձնաժողովը չբավարարեց դիտորդների բանավոր պահանջը: Բացի դրանից, դիտորդները նախագծի մենեջմենտից ստացան հրահանգ, լրացնել միջադեպերի ձևը խախտման կամ թերության ամրագրման դեպքում և այդպիսով կիրառել իրավական մեխանիզմը հիմնախնդիրը լուծելու նպատակով: Ընդհանուր առմամբ, PMMG-ի դիտորդները լրացրեցին միջադեպի 77 ձև ընտրությունների մոնիտորինգի ընթացքում: Արմատախիլ արվեցին 74 միջադեպեր բանավոր դիտողության հիման վրա, առանց բողոք ներկայացնելու:

Ընդամենը, PMMG-ի դիտորդները.

- Արել են 77 բանավոր դիտողություն և լրացրել են միջադեպերի նույնքան ձև,
- Կազմել և համապատասխան ընտրական տեղամասերին ներկայացրել են 48 բողոք,
- Կազմել և տարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացրել են 9 հայց:

Բացի դրանից, PMMG-ի իրավաբանները կազմել և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացրել են 2 հայց և, նույնպես 4 հայց՝ դատարանին:

Պետք է նշել, որ դիտորդները, ինչպես նաև իրավաբանները բողոքները և հայցերը կազմել են ընտրական խախտումներից հետո հիմական անուններին արձագանքելու նպատակով. ա)ձայն տալու գործընթացի վրա ճնշման փորձ, բ)դրոշմանշման ընթացակարգի խախտում, գ)մի քանի ընտրական խախտում, որոնք խոչընդոտել են նախապատրաստական և ձայն տալու գործընթացներին, դ)ընտրական տեղամասերում ընտրական քվեաթերթերի անբավարարությունը սիստեմատիկ խախտում էր, ե)մեկից ավելի ընտրողի մուտքը քվեարկության խցիկ ստացել էր սիստեմատիկ բնույթ:

12. Երաշխավորություններ

Հոկտեմբերի 1-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքների վրա հենվելով, PMMG-ն քննարկելու համար մշակեց հետևյալ միջճյուղային երաշխավորությունները պետական կառուցվածքների, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների համար, որպեսզի ապագայում իրականացվի համապատասխան ջանք միջազգային նորմերին և չափանիշերին համապատասխան արդարացի և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու նպատակով:

1. Օրենսդրական բազայի բարելավում.

1.1. Գոյություն ունի այն բանի մեծ կարիք, որ վերանայվեն ընտրական համակարգում իրականացված փոփոխությունները, ինչը պետք է հիմվի հիմական մասնակիցների շրջանում լայն խորհրդատվությունների վրա, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների ընդգրկումով: Մեկ անգամ կրկին նշվելու է, որ անհրաժեշտ է ընտրական տարածքների սահմանների վերանայում, որպեսզի չլինի մեծ տարբերություն ընտրական տարածքների միջև՝ գրանցված ընտրողների թվաքանակի համաձայն և ապահովված լինի ձայների հավասար քանակություն: Բացի դրանից, ընտրական համակարգը այնպես պետք է լինի կառուցված, որպեսզի պաշտպանված լինի ընդհանուր համամասնությունը:

1.2. Վրաստանի նորընտիր խորհրդարանը պետք է մշակի և ընդունի նոր ընտրական օրենսդրություն ներկայիս և անցած ընտրությունների ժամանակ հայտնաբերված աճող անհամապատասխանությունները վերացնելու նպատակով: Նոր ընտրական օրենսդրությունը պետք է հենվի փոխզիջման վրա և առավելագույնս նախատեսի տեղական և միջազգային շահագրգիռ կողմերի կողմից մշակված երաշխավորությունները:

1.3. Ընտրական օրենսդրությունում պարզորոշ պետք է սահմանված լինի վարչական ռեսուրսների չարաշահումը և այս նպատակով արգելի քաղաքական կուսակցությունների և հանրային աստիճանավորների կողմից ամեն տեսակի վարչական ռեսուրսի, այդ թվում ֆինանսական, նյութական, տեխնիկական և մարդկային ռեսուրսի ուղիղ կամ անուղղակի կիրառումը ընտրական քարոզարշավ վարելու նպատակով:

1.4. Անհրաժեշտ է մտցնել ընտրական օրենսդրության նոր կարգավորիչ մեխանիզմներ, քաղաքական պաշտոնական անձանց կողմից ընտրական քարոզարշավը ծառայողական պարտականությունների հետ համակցելուց, ինչպես նաև կառավարության նախաձեռնությունների և ընտրական քարոզարշավի միջոցառումների միջև սահման գոյություն չունենալուց խուսափելու նպատակով: Բացի դրանից, օրենսդրությունում պարզորեն պետք է պարզաբանված լինեն ընտրական քարոզարշավի և ձայները վաճառելու հասկացությունները:

2. Ընտրական վարչակազմ.

2.1. Չնայած ընտրական վարչակազմի անդամների մասնագիտական որակի որոշակիորեն բարելավմանը, դեռևս գոյություն ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների հիմնավոր վարժանքի անհրաժեշտություն, առանձնապես ընթացակարգային հարցերով, այդ թվում ձայները հաշվելու և տաբուլացիայի շուրջ:

2.2. Ընտրական հանձնաժողովը կառավարող դիրքերում պետք է ապահովի պաշտպանական մեխանիզմ ցանկացած քաղաքական կուսակցության դոմինացման դեմ: Բացի դրանից, նոր իրատեսության համարժեք ընկալման և վստահության աճի նպատակով,ընտրական հանձնաժողովի նախագահը պետք է ընտրված լինի կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներից, քաղաքական կուսակցությունների միջև խորհրդատվությունների և փոխզիջման հիման վրա:

3. Նախընտրական գործընթաց.

3.1. Ապագա ընտրությունների համար Վրաստանի պետական գերատեսչությունները հանրային աստիճանավորներին պարզորոշ պետք է բացատրեն, որ նախընտրական գործընթացին ցանկացած տեսակի միջամտություն, այդ պվում ճնշում, սպառնանք, մարդու իրավունքների խախտում, ֆիզիկական և բանավոր անպատվություն, անօրեն հետևում, աշխատանքից անօրեն ազատում և քաղաքական կուսակցությունների ակտիվիստների, ինչպես նաև հանրային և մասնավոր սեկտորի կամ ընտրողների հիմնական իրավունքների և ազատությունների այլ կարգի խախտումը անընդունելի է և կպատժվի: Բացի դրանից, օրենքի խախտման ցանկացած դեպք հետաքննված պետք է լինի համապատասխանաբար և անկողմնակալ:

3.2. Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է ապահովի, որ ընտրական օբյեկտների կողմից, ընտրությունների ավարտից հետո, հաղորդված նախընտրական քարոզարշավների ֆինանսավորման մասին տվյալների աուդիտը իրականացվի միջազգային չափանիշերին համապատասխան: Բացի դրանից, ընտրական սուբյեկտները պետք է ստանձնեն պարտավորություն, ներկայացնեն տեղեկատվություն հիմադրամների նախնական դոնորների մասին:

4. Լրատվամիջոց

4.1. Եվս մեկ անգամ պետք է նշվի, որ իշխանությունը և քաղաքական կուսակցությունները պետք է ձեռնպահ մնան լրատվամիջոցների և լրագրողների գործունեությանը միջամտելուց, քանզի այդպիսի արարքը քայքայում է նրանց անկախությունը:

4.2. Պետք է ստեղծվի լրատվական մոնիտորինգի ուժեղ մարմին, որը կկիրառվի թեկնածուների և քաղաքական կուսակցությունների մասին որևէ կողմնակալ և չհավասարակշռված նորությունների ամրագրման և հիմնախնդիրը ուղղելու համար համապատասխան արագ արձագանքման նպատակով:

4.3. Անհրաժեշտ է իրականացնել հետագա ջանքեր հանրային հաղորդիչի անկախության որակը բարձրացնելու նպատակով, այդ թվում անկողմնակալ խմբագրական պրակտիկայի մշակման ճանապարհով, հատկապես նորությունների ծրագրի համար: Նորությունների լուսաբանումը պետք է լինի հավասարակշռված և փաստերի վրա հիմված:

4.4. Պետական իշխանությունը պետք է կիրառի ցանկացած մեխանիզմ լրատվության բոլոր միջոցների համար համահավասար աշխատանքային միջավայր ստեղծելու նպատակով, ներառյալ լրատվական տարածքում հավասար ներթափանցման ապահովումը:

5. Բողոքներ և հայցեր.

5.1. Հարկավոր է, որ ապահովված լինի բողոքների և հայցերի մշակման պարզեցված գործընթաց ընտրական հանձնաժողովների որոշումներին և ընտրական խախտումներին համապատասխանաբար արձագանքելու նպատակով: Ընթացակարգը պետք է պարունակի բողոքարկման միասնական գործընթաց, պահպանի նվազագույն տեխնիկական պատնեշներ և օգնության պարզ մեխանիզմեր:

5.2. Պետք է նշվի, որ բողոքների և հայցերի ներկայացման ժամկետները պետք է երկարաձգվեն, որպեսզի հայցվորն ունենա բավական հնարավորություն փաստարկները մշակելու և պատշաճ կերպով ապացույցները պատրաստելու

համար:

5.3. Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է ընտրական վարչության բոլոր մակարդակներով,գրանցումից մինչև որոշում ընդունելու փուլը, մշակի մանրամասն աշխատանքային ընթացակարգեր բողոքների և հայցերի քննարկման կապակցությամբ: Այս նպատակով, տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովների անդամները և իրավաբան-աշխատակիցները պետք է անցնեն վարժանք ընտրական օրենսդրությունից, արբիտրաժի ունակություն-հմտության և գործընթացի համապատասխան չափանիշերում: Բողոքների մասին որոշումները և դրանք ընդունելու գործընթացը պետք է լինի կանոնավոր, հիմվի փաստերի, օրենքի և ապացույցի վրա և ընթանա իրավացիորեն առողջ և անկողմնակալ միջավայրում:

5.4. Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կանոնավոր կերպով պետք է նորացնի ընտրական վարչությանը ներկայացված բողոքների և հայցերի տվյալների բազան և մատնացույց անի հղված համապատասխան որոշումների վրա, որոնք բեռնված կլինեն նրա համացանցային էջին:

5.5. Հարկավոր է, դատարանում ընտրությունների հետ կապված գործի հանձնման վրա հաստատված հարկագանձումը վերացվի կամ լինի նվազագույն, որպեսզի դրանով պատնեշ չստեղծվի շահագրգիռ կողմերի բողոքներ և հայցեր կազմելու գործընթացում: Օրենքը նաև իրավունք պետք է տա ընտրողներին ընտրական օրենսդրության ցանկացած խախտման կապակցությամբ ներկայացնելու բողոքներ ընտրական հանձնաժողովներին և դատարաններում:

5.6. Գոյություն ունի կուսակցության և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների իրավաբանների վարժանքի անհրաժեշտություն ընտրական օրենսդրությունից, խախտումների հետաքննման և ապացույցների հավաքման ունակություն-հմտությունից, հայցեր ներկայացնելու ընթացակարգերից և արդյունավետ բողոքների կազմման և ներկայացման ունակություն-հմտությունից:

6. Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը.

Հոկտեմբերի 1-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներից պարզ երևում են հետևյալ հիմախնդիրները և մարտահրավերները, որոնք հաղթահարել ազգային փոքրամասնությունները փորձում են ընտրությունների ժամանակաշրջանում. Դրանք են ընտրական հարցերի մասին գիտելիքի և ունակություն-հմտության սակավություն, սեփական ընտրական իրավունքների, ինչպես նաև քաղաքական համակարգի ընկալման պակասություն, քաղաքական սուբյեկտների ծրագրերում ինքնագիտակցության պակասություն, ընտրական գործընթացի նշանակության և բնույթի ընկալման պակասություն: Հիմախնդրի ուղղումը պահանջում է տարբեր կողմերի հաջորդական

և հիմնավոր աշխատանք՝ փոքրամասնությունների տարածաշրջաններում ընտրողների ուսուցման համապատասխան ծրագրերի իրականացման նպատակով: Այս ուղղությամբ.

6.1. **Տեղական քաղաքացիական հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և զանգվածային լրատվությունը** պետք է իրականացնի լայնամասշտաբ, երկարաժամկետ ուսումնական ծրագիր ընտրողների, քաղաքացիական և քաղաքական հարցերով ազգային փոքրամասնությունների խմբերի համար, ընտրությունների միջև եղած ընդմիջումներում:

6.2. **Կրթական հիմնարկությունները** պետք է մտցնեն ընտրողների ուսուցման տարր միջնակարգ դպրոցների ավարտական դասարանների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրերում, ոչձևական կրթության և ավարտական դասարանների աշակերտների և համալսարանի ուսանողների շրջանում գիտակցության բարձրացման միջոցառումներին աջակցության նպատակով:

6.3. **Ընտրական վարչակազմը** պետք է շարունակի ընտրողների անպաշտպան խմբերի հարցերով հատուկ աշխատանքային խմբի գործունեությունը և ընդլայնի իր գործունեության տեսադաշտը. Շարունակի տեղամասային ընտրական հանձնաժողովի ազգային փոքրամասնության անդամների վարժանքը:

6.4. **Քաղաքական կուսակցությունները** պետք է իրականացնեն լրացուցիչ ջանքեր ազգային փոքրամասնությունների տարածաշրջաններում անպաշտպան շերտերի հետ աշխատանքի, սեփական ծրագրերի մասին ընտրողների իրազեկման և տեղական մակարդակով քաղաքական երկխոսության օժանդակման տեսանկյունից:

13. Ընտրությունների արդյունքներ

Գումարային ցուցանիշներ.

Ընտրողների թվաքանակը. 3 613 851

Ընտրողների թիվը, ովքեր մասնակցեցին քվեարկությանը. 2 215 661

Անվավեր քվեաթերթիկների թվաքանակը. 62 874

Ստացած ձայների թվաքանակը ըստ ընտրական սուբյեկտների.

#	Կուսակցության(դաշինքի) անունը	Ստացած ձայների թվաքանակը	%	Ստացած մանդատների թվաքանակը
1	«Կախա Կուկավա – Ազատ Վրաստան»	5 865	0.27	
4	«Ազգային-ժողովրդավարական կուսակցություն»	3 023	0.14	
5	«Միասնական ազգային շարժում – ավելի օգուտ ժողովրդին»	867 432	40.34	33 Համամասնական 32 մեծամասնական
9	«Հանուն արդար Վրաստանի»	4 073	0.19	
10	«Գեորգի Թարգամաձե – քրիստոնեա-ժողովրդավարական միավորում»	43 805	2.04	
17	«Ժողովրդական շարժում»	546	0.03	
19	«Ազատություն- Զվիադ Գամսախուրդիայի ճանապարհը»	1 013	0.05	
23	«Ջոնդի Բաղաթուրիա – վրացական դասի»	2 323	0.11	
24	Նոր աջեր» քաղաքական միավորում	9 255	0.43	
26	«Ժողովրդական կուսակցություն»	527	0.02	
30	«Մերաբ Կոստավայի ընկերություն»	997	0.05	
35	«Ապագա Վրաստան»	701	0.03	
36	«Վրաստանի աշխատավորների խորհուրդ»	581	0.03	
38	«Շալվա Նաթելաշվիլի – Վրաստանի լեյբորիստական կուսակցություն»	26 621	1.24	
40	«Վրաստանի սպորտսմենների ընկերություն»	1 572	0.07	
41	«Բիձինա Իվանիշվիլի –վրացական երազանք»	1 181 862	54.97	44 համամասնական 41 մեծամասնական

Աղբյուր. ԿԸՀ-ի Հանրագումարային արձանագրություն և պաշտոնական կայք-էջ. http://cesko.ge/files/2012/SUMMARY_PROTOCOL_2012.pdf

14. PMMG-ի մասին

Համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանը« (PMMG) գրանցվել է 1999 թվականի հունիսի 1-ին որպես ոչ կառավարական կազմակերպություն: PMMG-ն միավորում է Վրաստանի քաղաքացիներին, ովքեր պատկանում են երկրում բնակվող տարբեր ազգային, կրոնական և լեզվական խմբերին: Այն ներկայացնում է հովհարային կազմակերպություն, որը իրականացնում է ռեսուրսով աջակցություն և համագործակցություն 18 համայնքային և շուրջ 56 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ովքեր աշխատում են Վրաստանում բնակվող տարբեր ազգային, կրոնական և լեզվական խմբերի հետ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: PMMG-ն օգտվում է Եվրախորհրդի գործընկեր կազմակերպության կարգավիճակից: Այն նաև ներկայացնում է «Հարավային Կովկասում ատելության դեմ պայքար» միջազգային կոալիցիայի շահերը: Այն եվրոպական լեզուների դաշնային միության անդամ է:

2005 թվականից PMMG-ն ընդգրկված է Կախեթի, Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում ընտրական մոնիտորինգի ծրագրի իրականացման մեջ: PMMG-ի կողմից ներկայացված արդյունքները և երաշխավորությունները կանոնավոր կերպով տարածվում են տարբեր շահագրգիռ կողմերի շրջանում, ներառյալ ԿԸՀ-ն: Կազմակերպության կողմից մշակված երաշխավորությունները ընտրական միջավայրի քաղաքականության մասին մեծավ մասամ հաշվի են առնվել և ճանաչվել են համապատասխան շահագրգիռ կողմերի՝ միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից:

PMMG-ի գործունեության հիմնական ուղղություններն են. անպաշտպան խմբերի, իսկ առաջին հերթին ազգային, կրոնական և լեզվական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, աջակցությունը և նրանց կարողության զարգացումը և նույնպես բոլոր մակարդակներով նրանց ակտիվ քաղաքացիական մասնակցության համար պատշաճ պայմանների ստեղծումը, հակամարտությունների վճռումը, խաղաղության և քաղաքացիական համաձայնության աջակցությունը, մարդու իրավունքների չափանիշերի և մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանության մոնիտորինգը, ժողովրդավարական տրանսֆորմացիայի և եվրոպական արժեքների աջակցությունը, տեղական ինքնակառավարումը և տեղական համայնքների զարգացումը, միջմշակութային երկխոսության և փոխանակման զարգացումը, հասարակությունում ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակության հետքերով, ընտրողների ուսուցումը, ընտրությունների մոնիտորինգը և անպաշտպան խմբերի արդյունավետ քաղաքական, քաղաքացիական և ընտրական ընդգրկվածության աջակցությունը:

Մանրամասն տեղեկատվությունը տես՝ PMMG-ի պաշտոնական կայք-էջում. http://pmmg.org.ge